Navassardian a analysé en détails les collections *Aurore épique* et *Livre de route* de Tcharents, soulignant leurs changements idéologiques.

Il parle aussi des strophes que Tcharents a écrites, se moquant du Parti Dachnak.

Navassardian avait appris à l'avance que Tcharents irait au Musée National de Rome et y était allé aussi pour le rencontrer. Ensuite, ils s'étaient promenés le long de la magnifique avenue Via Imperia de Rome et étaient arrivés au point où se trouvaient trois cartes anciennes en haut relief, qui représentaient le monde avant la naissance de Jésus-Christ : « Sur cette carte, en Asie Mineure, notre unique patrie, l'Arménie, pleine de mystères insondables, s'étalait magnifiquement. Il n'y avait pas d'autres nations : ni Turcs, ni Géorgiens, ni Arabes, etc.

Le moment, le lieu, c'était la carte de l'Arménie vivant environ huit siècles avant notre ère, contre l'un des murs historiques de la Rome Éternelle, qui avait parfois régné sur le monde, et la présence du puissant jeune poète chantant les foules affolées. Tout cela m'a inspiré pour déclamer avec douceur et du fond de l'âme le magnifique poème de Tcharents *Ma douce Arménie*[10].

Navassardian fait référence à la division idéologique de la poésie lyrique de Tcharents par Poghos Makintsian : « Premièrement, il a été un poète d'avant la période révolutionnaire, deuxièmement, il a vécu et agi comme un « lutteur de guerre et de révolution », troisièmement, après la soviétisation de l'Arménie, il est devenu l'expression de la renaissance de l'Arménie Soviétique »[11].

Toutefois, l'appréciation de Makintsian et la renommée de Tcharents ont suscité l'envie de nombreuses personnes et des articles négatifs ont été écrits contre le poète. Par exemple G. Vanandétsi a écrit en 1927 dans sa brochure *Yéghiché Tcharents* : « Tcharents n'est pas un élément actif d'une grande

[9] **Navassardian** 1957, 9.
[10] **Navassardian** 1957, 24.
[11] **Navassardian** 1957, 28.

collectivité, il ne participe pas au pathos créatif du pays, qui bat son plein, mais vit à ce jour avec son pathos individuel intérieur »[12].

Le miracle poétique de Tcharents, *Ma douce Arménie*, est qualifié d'une manifestation meurtrière de nationalisme[13].

L'académicien Edouard Djerbachian a consacré une étude spéciale et approfondie aux cruelles critiques littéraires de la poésie *Ma douce Arménie*.

La persécution contre Tcharents dépasse les cercles arméniens, elle est discutée à l'échelle transcaucasienne. Le livre *Essais sur la littérature transcaucasienne* (1928) de Vladimir Soutirine, figure littéraire et politique, déclare que le « style » de Sayat-Nova, utilisé dans le *Recueil poétique* de Tcharents n'est pas en harmonie avec la vocation d'un poète prolétarien[14].

Analysant en détail chaque mot et chaque vers de la poésie *Ma douce Arménie*, Djerbachian réaffirme avec admiration la merveilleuse caractéristique donnée par Martiros Sarian : « C'est le reflet vivace de la biographie et du comportement de notre nation, de nos souffrances et de nos meilleurs idéaux, de nos chutes et de nos remontées, de notre destin sujet aux catastrophes, la synthèse et la cristallisation artistiques de nos aspirations à l'immortalité. Pour donner naissance à une telle œuvre, il faut être pour le moins un demi-dieu »[15].

Archak Tchopanian, fin connaisseur de la littérature mondiale, a écrit en 1924 que Tcharents était une nouvelle confirmation du génie arménien et, en même temps, un signe prophétique de la consolidation morale de la nation arménienne[16].

Proclamant Grigor Narékatsi et Nahapet Kouchak des génies inconditionnels et se faisant une cible pour les attaques, Tcharents a trouvé un moyen de se défendre, en nommant les mêmes auteurs médiévaux, Narékatsi et Chnorhali, « sombres écrivains noirs », «adolescents d'esprit et sans lumière ». Selon Navassardian, le poète a tenté de sauver son « crédit » de cette manière.[17]

N'oublions pas un fait important. En août 1934, le premier congrès des écrivains de l'URSS a eu lieu à Moscou, au cours duquel Tcharents a prononcé un

---

[12] **Navassardian** 1957, 29.
[13] **Navassardian** 1957, 30.
[14] **Djerbachian** 2003, 19.
[15] **Djerbachian** 2003, 24–2.
[16] **Tcharents** 2007, 30.
[17] **Navassardian** 1957, 32.

discours de ralliement et proclamé fièrement devant les invités arrivés à Moscou de différentes républiques, ainsi que devant les hôtes étrangers, que ses professeurs de poésie étaient les poètes arméniens médiévaux. Le grand poète a soulevé un problème qui s'oppose aujourd'hui de façon merveilleuse aux auteurs de la mondialisation : «Aussi petits que soient un peuple et sa littérature, cette dernière ne peut ne pas avoir sa nuance originale, unique et irremplaçable, qui ne soit propre qu'à cette littérature et à ses meilleurs représentants. Cela peut être accepté a priori, sinon nous serions obligés de nous positionner sur le point de vue racial »[18].

Dès juillet 1934, comme l'indique Navassardian, des nuages sombres se sont amoncelés sur la tête de Tcharents. 0n écrivait à son sujet : « Dans notre littérature, le groupe de Tcharents est l'expression des tendances nationalistes avec sa série d'opinions littéraires et politiques »[19].

C'était une accusation plus que dangereuse, car Tcharents était membre du Parti Communiste de l'Union Soviétique depuis 1918[20]. Tcharents et ceux qui partageaient ses opinions étaient accusés d'être partisans du Parti Dachnak[21].

Le livre de Navassardian cite également la question posée à Stépan Zorian par Staline, lors de la réunion d'une délégation d'écrivains arméniens avec ce dernier à Moscou en janvier 1936, sur la vie de l'écrivain Yéghiché Tcharents. Cette conversation a été immédiatement publiée dans quatre journaux officiels de l'Union Soviétique: « *Pravda* », « *Izvestia* », « *Arménie Soviétique* » et « *Zaria Vostoka* »[22].

Navassardian, qui témoigne de ce que Tcharents a écrit contre le Parti Dachnak, mentionne que durant ses jours les plus durs et cauchemardesques, l'écrivain recommandait la même chose que les membres du Parti Dachnak : « O peuple arménien, ton unique salut réside dans ta force collective »[23].

De nombreuses pages du livre contiennent des citations de divers ouvrages de Tcharents avec des commentaires correspondants. Dans un nombre considérable de pages, la lutte irréconciliable du bolchevisme et de Tcharents est

[18] **Tcharents** 1957, 166.
[19] **Navassardian** 1957, 35.
[20] **Khatchatrian** 1986, 441.
[21] **Navassardian** 1957, 3.
[22] **Navassardian** 1957, 36.
[23] **Navassardian** 1957, 42.

décrite ; elle s'est aggravée lorsque Tcharents a vu à quel point les Turcs se sentaient parfaitement maîtres des territoires historiques de l'Arménie, de l'Artsakh et du Nakhitchevan.

Bien des pages du livre sont consacrées aux réalités des relations Staline-Tcharents, à l'accord des bolcheviks concernant Kars, ce qui doit être particulièrement intéressant pour les spécialistes traitant de l'histoire du peuple arménien, car certains faits y sont cités.

Navassardian se réjouit du fait que Tcharents n'ait jamais flatté Staline. Il doute même que le poème inachevé *Lettre à Iossif Staline,* imprimé dans le tome *Pages choisies de la littérature arménienne (des époques les plus anciennes à nos jours)*, publié en 1946 et composé de 1160 grandes pages, ait été écrit par Tcharents.

À la fin de la dédicace du poème inachevé, il y a une date : « Anno Domini MGMXXXVI », c'est-à-dire 1936. Elle est précédée de l'inscription : « De la part de Yéghishé Tcharents, le plus grand mécène et amateur des maîtres étranges de la parole poétique et le plus humble poète du peuple naïrien »[24]. C'est ainsi que Grigor Narékatsi se serait adressé à Dieu. Cette dédicace, qui est écrite dans le style de Tcharents, a semé le doute chez Navassardian, et il a écrit : «Pourquoi le poème est-il resté « Inachevé » ? Où est l'explication de ce mystérieux secret ? Si Tcharents avait un si grand respect à l'égard de « Iossif Staline », pourquoi n'y a-t-il pas de trace de ce respect dans son œuvre littéraire ? Pourquoi n'a-t-il jamais loué le génie stalinien avec sa lyre avant la *Lettre* ? Pourquoi est-il resté muet jusqu'à sa mort ? »[25]. Navassardian ne trouve pas la réponse à ces « pourquoi ». Il est à noter que dans le volume *Pages choisies de la littérature arménienne*, publié en 1946, la poésie *Ma douce Arménie* de Tcharents est également incluse.

Navassardian cite les paroles dites à la mémoire du poète par Nikol Aghbalian, qui avait découvert le poète Tcharents et avait été profondément attristé par sa mort tragique. « Il a été le pétrel de la révolution mondiale, qui avait volé du pays d'Arménie pour participer à l'attaque des « foules affolées ». Lorsque la vague est descendue, ses ailes habituées aux tempêtes sont restées calmes. Les reptiles n'ont pas atteint l'aigle. Son ascension en dérangeait maintenant beaucoup de gens. Et Cronos a avalé les petits ... Avec beaucoup de

[24] **Navassardian** 1957, 101.
[25] **Navassardian** 1957, 103.

ceux qui avaient encore une tempête dans leur âme, Tcharents s'est tu pour toujours »[26].

BIBLIOGRAPHIE

Aghababian S.B. Yéghiché Tcharents, 1973, tome I, Éd. de l'Académie des Sciences de la RSS d'Arménie, Erevan, 440 pages (en arménien).

Aghababian S.B. Yéghiché Tcharents, 1973, tome II, Éd. de l'Académie des Sciences de la RSS d'Arménie, Erevan, 398 pages (en arménien).

Ananian G.G. Yéghiché Tcharents, 1987, Éd. « Sovétakan Grogh », Erevan, 387 pages (en arménien).

Khachatrian H. Annuaire littéraire, 1986, Éd. « Sovétakan Grogh », Erevan, 622 pages (en arménien).

Zakarian A. Yéghiché Tcharents, Sa vie, son œuvre, son époque, 2002, tome 2, Erevan, Éd. Un.Ec.RSS d'Arménie, 430 pages (en arménien).

Navassardian V. Tcharents (Mémoires et Méditations), 1957, Éd. « Houssaber », Le Caire, 132 pages (en arménien).

Djerbachyan E. La poésie de Yéghiché Tcharents Ma douce Arménie, 2003, Éd. « Nor Dar », Erevan, 71 pages (en arménien).

Tcharents Y. Sur la littérature, 1957, Éd. de l'Académie des sciences de la RSS d'Arménie, Erevan, 2016 pages (en arménien).

Tcharents Y. Dernier mot, 2007, Éd. « Hayaguitak », Erevan, 326 pages (en arménien).

Tcharents Y. Celui qui a corrigé la mort, qui a créé la terre, 2008, Éd. « Golos-Press », Moscou, 223 p. (en russe).

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ «ՉԱՐԵՆՑ» ԳԻՐՔԸ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Ա.

Ամփոփում

Բանալի բառեր՝ Վահան Նավասարդյան, Եղիշե Չարենց, պրոլետգրականություն, Գրիգոր Նարեկացի, չարենցագիտություն, արտասահման, Մյասնիկյան:

[26] **Navassardian** 1957, 110.

Վահան Նավասարդյանի գիրքն առաջին անգամ լույս է տեսել Կահիրեում (1957)՝ «Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)» վերնագրով: Այն որոշակի ավանդ է չարենցագիտության մեջ և բացի այդ, ունի ճանաչողական մեծ արժեք: Գրքի հեղինակը քաջածանոթ է Չարենցի ողջ ստեղծագործությանը, նրան համարում է հանճար, որի գրական խոսքը ժամանակի պատմական ու քաղաքական հեղաբեկումների ընթացքում ենթարկվում է փոփոխությունների՝ ամբողջանալով ազգային աշխարհընկալմամբ և համամարդկային բնույթով:

КНИГА «ЧАРЕНЦ» ВАГАНА НАВАСАРДЯНА

ДОЛУХАНЯН А.

Резюме

Ключевые слова: Ваган Навасардян, Егише Чаренц, пролетарская литература, Григор Нарекаци, чаренцеведение, зарубежье, Мясникян.

Книга Вагана Навасардяна впервые была издана в Каире (1957) и называлась «Чаренц» («Воспоминания и размышления»). Она является определенным вкладом в изучение творчества Чаренца, а также имеет огромное познавательное значение. Автор книги хорошо знаком с творчеством Чаренца в целом. Ваган Навасардян называет поэта гением, а его произведения, проникнутые национальным мирочувствием, имеют общечеловеческое звучание.

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող
sushovh@mail.ru
DOI: 10.54503/1829-4073-2022.2.153-174

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ (ՈՒՐՎԱԳԻԾ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ)

Նվիրվում է Գարեգին Լևոնյանի 150-ամյակին

Բանալի բառեր՝ Գարեգին Լևոնյան, հայագիտություն, «Գեղարվեստ», աշուղագիտություն, գրատպություն, Բաղդասար Դպիր, հուշագրություն:

Ներածություն

Գարեգին Լևոնյանը իր բարձրարժեք աշխատություններով կանգնած է գրականագիտության, մամուլի պատմության գիտականացման հումանիտար ուղղության ձևավորման ակունքներում և հայագիտության մեջ այդ ուղղության հիմնադիրներից մեկն է: Նրա ուսումնասիրություններում հայկական կերպարվեստն է և աշուղական երաժշտությունը, հայ գրականությունն ու գեղագիտությունը, հայ գիրքն ու տպագրական, նաև փորագրական արվեստը, հայոց թատրոնն ու մամուլի պատմությունը: Գ. Լևոնյանի գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են հայ մշակույթի ոչ միայն նշված բնագավառներին: Նա ուսումնասիրել է հայ մանրանկարչության և որմնանկարչության հուշարձանները, Արցախի և Ուտիքի մանրանկարչական արվեստը, հայ թատրոնի պատմությունը: Իր յուրաքանչյուր աշխատության մեջ հայագետը փաստական նյութի առատության ընդգրկման, փաստերի համադրման միջոցով մշակում էր գիտության տվյալ բնագավառի իմացական համակարգ, առանց որը վերլուծելու և մեկնաբանելու որևէ մեթոդ կիրառելի չէ: Գ. Լևոնյանի գիտական հետաքրքրության շրջանակում մշտապես եղել են նաև ռուս և

[*] *Հոդվածը ներկայացվել է 15.04.22, գրախոսվել է 16.05.22, ընդունվել է տպագրության 22.08.22:*

արտասահմանյան գրականության դասականների ստեղծագործությունները: Նա գրախոսում էր օտար լեզուներով մատենագիտական ու հանրագիտարանային բնույթի աշխատություններ[1]: Պատահական չէ, որ նրա բարեկամներից Ավետիք Իսահակյանը 1934-ին հարցնում էր. «Ե՞րբ ես ձեռնարկելու էնցիկլոպեդիայիդ հատորները»[2]: Եվ հենց Իսահակյանն է շատ դիպուկ բնորոշել նրա գործունեությունը՝ իր «Հոգնատանջ բանասերը» խոսուն վերնագրով հոդվածում գրելով. «Լևոնյանի ընդգրկումը լայն էր, հետաքրքրությունները՝ բազմազան, ծրագրերը՝ շատ: Նա տասնյակ տարիների ընթացքում, իր անխոնջ գործունեությամբ հիշեցնելով ժրաջան մեղվին, հավաքել ու կուտակել է ահագին փաստական նյութ գրքերից, արխիվներից, փոշիների տակից, մի խոսքով անհայտությունից լույս աշխարհ բերել բազմաթիվ փաստեր ու տվյալներ, որոնց հիման վրա գիտական ընդհանրացումների հասնելը բանասիրության նոր սերնդի պարտքն է»[3]:

Աշուղագիտության նվիրյալը

Գ. Լևոնյանը աշուղ Ջիվանու որդին էր՝ (ծնվ 06.11.1872 թ. – Ալեքսանդրապոլ) և, անշուշտ, այդ հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չունենալ երիտասարդի գիտական հետաքրքրությունների ձևավորման գործում: Գիտակցական, թե անգիտակցական մղումներով նաև ընտանիքում առկա մշակութաբանական առարկայություններով ձևավորեցին Գարեգինի անհատականությունը և կյանքում ունեցած գիտության ու արվեստի նախասիրությունները: 20-ամյա Լևոնյանը իր ծննդավայրում 1892-ին լույս է ընծայում «Հայ աշուղներ» աշխատությունը[4]: Բանասերի այս երախայրիքում արդեն զգացվում էր տաղանդավոր գիտնական մատենագետը: Հեղինակը հայ մշակույթի ու բանասիրության ասպարեզում ապագա արգասաբեր գործունեության հայտ էր ներկայացրել: Ժամանակագրական հաջորդականությամբ, հստակ համակարգվածությամբ Լևոնյանը ընթերցողին է հաղորդում հայ մշակույթի

[1] Նկատի ունենք Մ. Չերազի «Poetes Armeniens», Կ.Կոստանյանի՝ Պետերբուրգում լույս տեսած «Bibliotheca Armeno-Georgica //Летопись на камнях. Собрание – указатель арм. надписей 1913). օտարալեզու աշխատությունների մասին «Մինաս Չերազ և իր գործը», «Հայ-վրացական մատենադարան, 2-րդ վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց» վերնագրերով Գ.Լևոնյանի գրախոսականները (տե՛ս Մշակ 1914, № 36, 139, 140):

[2] **Իսահակյան** 2021, 352:

[3] Տե՛ս Սովետական արվեստ 1957, № 11, 71: Տե՛ս նաև **Իսահակյան** 2020, 500:

[4] **Լևոնյան** 1892, 151:

պատմության 200-ամյա շրջանի 225 հայ աշուղներից յուրաքանչյուրի մասին կենսագրական տեղեկություններ: Առաջին իսկ աշխատության մեջ զգացվում էին գիտնական հետազոտողի նախասիրությունները՝ փաստական ամուր հենքի վրա եզրահանգումները կառուցելու ձգտումը և հեղինակի գիտահետազոտական աշխատանքի հանրագիտական բնույթը: Այն արժևորեց գրքի առաջին գրախոսը՝ Գևորգ Ասատուրը (Աստվածատրյան)[5]: Գ. Լևոնյանի կյանքի ու գործի առաջին ուսումնասիրողներից Սարգիս Հարությունյանը գրում է. «Փաստական նյութի առարկայական մատուցում՝ առանց կանխակալ ենթադրությունների ու հետևությունների մոլորության, համեստություն, նյութի արժեքի գիտակցում և նյութի նկատմամբ պատմական մոտեցում,- ահա այն էական հատկանիշները, որ բնորոշ էին Լևոնյանի ոչ միայն անդրանիկ աշխատությանը, այլև հիմնական գծերով հատուկ էին նրա գալիք ուսումնասիրություններին»[6]:

Լավ սկիզբը ունեցավ բեղմնավոր շարունակություն և 1903–1906 թթ. Լևոնյանը հեղինակեց «Աշուղների մասին (Պատմաքննական հայացք)» ուշագրավ աշխատությունը[7], որտեղ կիրառեց աշուղների արվեստի մասին բազմակողմանի քննության մեթոդը: Հեղինակն անդրադառնում է և՛ ժողովրդական երգիչների դերին արևելյան ազգերի ու նաև հայերի կյանքում, և՛ աշուղների անձնական կյանքի, կենցաղի յուրահատկություններին և՛ աշուղական մրցումներին և՛ աշուղի երգերում նրա կյանքի դրսևորման ձևերին, և՛ աշուղական երգերի գեղարվեստական արժանիքներին ու քնարական առանձնահատկություններին: Այս բազմակողմանի մոտեցման շնորհիվ Լևոնյանը դառնում է մեզանում աշուղական արվեստի տեսության հիմնադիրը: Նա հրապարակայնորեն արժևորում էր աշուղական և առհասարակ միջնադարյան արվեստի մասին ցանկացած ուսումնասիրություն: Փարիզում հրատարակված Արշակ Չոպանյանի ուսումնասիրությունը՝ Նաղաշ Հովնաթանի ու Հովնաթան Հովնաթանյան նկարչի մասին, իբրև մշակութային ու գիտական նշանակալից երևույթ ընկալեցին ու գիրքը գրախոսեցին Հովի. Թումանյանը և Գարեգին Լևոնյանը[8]:

[5] Տե՛ս Մուրճ 1894, № 6, 924–926:

[6] Տե՛ս Պատմաբանասիրական հանդես 1970, № 3, 230:

[7] Տե՛ս Ազգագրական հանդես 1903, գիրք 10, 39–93, 1904, գիրք 11, 129–196, գիրք 12, 84–94, գիրք 13, 87–111, **Լևոնյան** 1963, 50–128:

[8] Տե՛ս Ազգագրական հանդես 1911, գիրք 21, 225–239:

Թե՛ գիտական հետաքրքրությունների բերումով, թե՛ արյան կանչով Լևոնյանը չէր կարող չանդրադառնալ իր հոր՝ աշուղ Ջիվանու ստեղծագործությանը: Նա Մոսկվայում հրատարակեց «Հայկական այժմյան քնարերգական բանահյուսությունը և աշուղ Ջիվանին»[9] ուսումնասիրությունը 36 էջի սահմաններում, ուր հայ բանահյուսության պատմության, միջնադարյան ու XIX դարի քնարերգության համապատկերում ներկայացրեց Ջիվանու գրական ժառանգությունը, ստեղծագործության մոտիվները, նրա արվեստի ու ոճի առանձնահատկությունները, նրա դերը հայ աշուղական արվեստի զարգացման գործում: Այնուհետև 1936 թ. կազմելով ու հրատարակելով Ջիվանու երգերի ստվարածավալ ժողովածուն՝ աշուղի կյանքն ու գործը ներկայացնող առաջաբանով, Լևոնյանը կարևոր ներդրում ունեցավ ջիվանագիտության մեջ: Աշուղագիտության հմուտ գիտակը չէր կարող չանդրադառնալ նաև մեծագույն հայ աշուղ-բանաստեղծին՝ Սայաթ-Նովային՝ թե՛ առանձին հոդվածով («Սայաթ-Նովայի խաղերի տաղաչափության մի քանի առանձնահատկությունների մասին»)՝[10] և թե Սայաթ-Նովայի երգերի ժողովածուի գիտական հրատարակությամբ: Պ. Մակինցյանի առաջաբանով՝ իր ժամանակի համար այդ ժողովածուն լիակատար էր, ընդգրկում էր խաղեր Գ. Ախվերդյանի հրատարակությունից , Գ. Ասատուրի հայտնաբերած երգերից և 6 խաղ էլ զանազան այլ աղբյուրներից: Լևոնյանը ոչ միայն գրքի խմբագիրն էր, այլև ներածական տեսության, ծանոթագրությունների ու բառարանի հեղինակը[11]: Ամենուր Լևոնյանն ընդգծում է Սայաթ-Նովայի դերը բանաստեղծական արվեստի, աշուղական տաղաչափական ձևերի զարգացման գործում: 1931 թ. այդ ժողովածուն երևույթ էր գրական կյանքում, որին սպասում էին երկար տարիներ: Ավ. Իսահակյանը 1930 թ. դեկտեմբերի 23-ին Փարիզից գրում է Լևոնյանին. «Անհամբեր սպասում եմ Սայաթ-Նովայիդ լույս տեսնելուն»[12]: Իսկ ժողովածուն ստանալուց հետո գրում է. «Շատ լավ հրատարակություն է: Լիակատար, սպասված ուսումնասիրություն է քո արածը»[13]:

Գ. Լևոնյանը պատշաճ ներդրում ունեցավ նաև հայ գրականության պատմության մեջ՝ հայտնաբերելով որոշակի աղերսներ միջնադարյան տաղեր-

---

[9] Տե՛ս Հանդես գրականական և պատմական 1896, գիրք 7, 280–316:

[10] Սովետական գրականություն 1941, № 2. **Լևոնյան** 1944, 87–98, **Լևոնյան** 1963, 404–414:

[11] Տե՛ս Սայաթ-Նովա 1931, 196:

[12] **Իսահակյան** 2021, 292:

[13] **Իսահակյան** 2021, 310–311:

գության և աշուղական արվեստի միջև: Աշուղական արվեստի առանձնահատկությունները քննելով միջնադարյան գրականության համատեքստում՝ Լևոնյանն իր ուսումնասիրություններում առանձնացրեց XVIII դարի քերական, երաժիշտ ու բանաստեղծ Բաղդասար Դպիրին՝ նրա ստեղծագործության մեջ տեսնելով և՛ միջնադարյան տաղերգուների, և՛ աշուղական երգերի տաղաչափական ձևերի առաջին համադրությունը: Հետևաբար, ըստ Լևոնյանի՝ Բաղդասար Դպիրն է դառնում միջնադարյան տաղերգության և աշուղներին կապող օղակը: Լևոնյանը, Դպիրի մասին իր հոդվածներում կիրառելով կենսագրական մեթոդը, զանազան սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ հայտնաբերելով քերականի կյանքի շատ դրվագներ, ճշգրտելով նրա անձի ու գործի հետ կապված մանրամասներ՝ իր մնայուն տեղն ապահովեց հայ միջնադարյան գրականության հետազոտողների շարքում: Նա դարձավ միջնադարյան տաղերգուի կյանքի ու գրականության, մասնավորապես բանաստեղծի սիրո և բնության երգերի ժամանակի լավագույն արժևորողներից մեկը:

Աշուղագիտությունը Լևոնյանը զարգացրեց նաև «Սոցիալական գաղափարները հայ աշուղական երգերի մեջ»[14], «Հայ ժողովրդական և աշուղական երգեր»[15], «Գ. Ախվերդյան», «Աշուղ Շերամ» հոդվածներով: Աշուղական երգերում Լևոնյանը հայտնաբերում էր ազգային գաղափարաբանություն և հայրենասիրություն: Այդ մասին է վկայում Հայ գրողների կովկասյան ընկերության ամբիոնից կարդացած նրա դասախոսությունը «Աշուղական արվեստը և ազգային հասարակական գաղափարները աշուղական երգերի մեջ» խորագրով[16]:

Լևոնյանի մասնագիտական հետաքրքրությունը աշուղական արվեստի նկատմամբ պահպանվեց մինչև իր կյանքի վերջ: Մահից երեք տարի առաջ տպագրեց «Աշուղները և նրանց արվեստը»[17] ուսումնասիրությունը, որով համակարգեց ու ամբողջացրեց աշուղների մասին գիտական մի ողջ ուսմունք: Այդ ասպարեզում Լևոնյանի ավանդը չի կարող շրջանցել աշուղական արվեստի ու նրա պատմության հետագա ոչ մի ուսումնասիրող:

[14] **Լևոնյան** 1963, 229–257:

[15] Տեղեկագիր 1930, № 4, 160–178, **Լևոնյան** 1963, 258–283:

[16] Տե՛ս **Գույյան** 1914, Հորիզոն № 25, **Պարույր** 1914, Հովիտ № 6, 93–94:

[17] **Լևոնյան** 1944, 106:

Հայ պարբերական մամուլի ու գրքի պատմագիրը

Գրականության պատմության մյուս բնագավառը, որտեղ Լևոնյանի ավանդը հսկայական է, հայ մամուլի մատենագիտության պատմության ոլորտն է: Երբ 1895 թ. լույս տեսավ Լևոնյանի «Հայ պարբերական մամուլը»[18], պարզ դարձավ, որ հանձին 22-ամյա երիտասարդի հայագիտության ասպարեզ է մտել հմուտ մատենագետ, պարբերական մամուլի նվիրյալ հետազոտող: Այս հանգամանքը նկատեցին նաև ժամանակակիցները և ըստ ամենայնի բարձր գնահատեցին Լևոնյանի աշխատությունը, որը տակավին ձեռագիր վիճակում, արժանացավ Սահակ-Մեսրոպյան մրցանակի: Ուսումնասիրությունը բարձր գնահատվեց նրա առաջին գրախոսներից մեկի՝ Ավ. Արասխանյանի կողմից[19]: 100-ամյա շրջանի մամուլի պատմագիտական տեսությունը հիացմունքի արժանացավ ամենուր՝ դառնալով ժամանակի հայ գրական կյանքի նշանակալի երևույթ: Իհարկե, եղավ նաև միտումնավոր և կանխակալ մոտեցում: Նկատի ունենք Աբել Ապրեսյանի «Նամակ խմբագրությանը», որտեղ քննադատվում է Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»[20]:

Մինչ Լևոնյանի աշխատությունը՝ հայ ընթերցողի սեղանին արդեն կային մեր պարբերական մամուլը համակարգված ներկայացնելու փորձեր, սակայն Լևոնյանի ուսումնասիրությունը իր թե՛ ծավալով, թե՛ գիտական համակարգվածությամբ շահեկանորեն տարբերվում էր երկու հոգևոր պյրերի աշխատություններից[21]:

Հենց Լևոնյանը հայ պարբերական մամուլի զարգացման ու նրա ուսումնասիրության գործը դրեց առավել լայն ու կայուն գիտական հիմքերի վրա: Ինչպես գրում է Արմինե Հակոբյանը, Լևոնյանի կազմած առաջին «ցանկը, կարելի է ասել, առաջին փորձն է առավել քան ամփոփ ներկայացնելու հայ պարբերական մամուլի անցած փառավոր ուղին»[22]: «Հայ պարբերական մամուլը» առավել լիակատար, արդեն 140 տարվա ընդգրկումով, հայ մամուլի անցած ուղին ներկայացնող ներածականով և աշխատության հանգամանքնե-

---

[18] **Լևոնյան** 1895, 572:

[19] Տե՛ս **Արասխանյան** 1895, Մուրճ № 5, 673–680:

[20] Տե՛ս Մշակ 13.09.1894, № 105:

[21] Տե՛ս **Հարո** (Նիկողայոս Տեր-Հարությունյան) 1878, 135: Հայր **Զարբհանալեան Գարեգին** 1883, 734: Հայր **Գրիգորիս Գալէմքեարեան** 1893, 226:

[22] **Հակոբյան** 2016, Հայագիտական հանդես, 2016, № 4 (34), 118:

րին ու սկզբունքներին վերաբերող առաջաբանով լույս տեսավ 1934-ին՝ Մել-քոնյան ֆոնդի հովանավորությամբ[23]:

Հայ մամուլի, գրքի ու տպագրության խնդիրները մշտապես մնացին Լեոնյանի գիտական հետազոտության շրջագծում: Պատահական չէ, որ նրա «Հայ պարբերական մամուլը» լույս տեսավ հայ լրագրության հարյուրամյակի առթիվ: Մամուլի պատմագիրը իր գիտական գործունեության մեջ չէր կարող շրջանցել գրատպության ու հայ գրքի պատմության խնդիրները: 1946-ին լույս տեսավ Լեոնյանի հեղինակած «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշ-խատությունը, որի գիտապատմական արժեքի մասին Ս. Հարությունյանը գրում է. «Թեպետ հայ գրքի ու տպագրության պատմությանը նվիրվել էին մի քանի աշխատություններ, այն էլ ստվարածավալ, այնուհանդերձ, Լեոնյանի գիրքը աչքի է ընկնում փաստացի նյութի առատությամբ, փաստերի նոր ու թարմ մեկնաբանություններով…Լեոնյանի աշխատությունը մի կարևոր ներդ-րում էր հայ տպագրության և առհասարակ հայ մշակույթի պատմագրության բնագավառում»[24] :

«Գեղարվեստ»

Մեծանալով ժամանակի անվանի արվեստագետների միջավայրում՝ Լեոնյանը վաղ տարիքից հրապուրվում է և երաժշտությամբ, նկարչությամբ և գրականությամբ: Տարիներ շարունակ, կարևորելով մշակութային պարբերա-կանի հրատարակությունը, նա ձգտում էր իրականություն դարձնել արվես-տով հասարակությանը կրթելու իր բաղձանքը: Կոմիտասի հետ համատեղ այդպիսի ամսագիր նախաձեռնելու ծրագրեր էին մշակում դեռևս 1905 թ. Էջ-միածնում[25], սակայն «Գեղարվեստ» գրական, երաժշտական, նկարչական պատկերազարդ հանդեսը (1908–1922) իրողություն դարձավ միայն Լեոնյանի ջանքերով ու նրա շնորհիվ: «Գեղարվեստը» նշանակալից դեր ունեցավ ար-վեստագիտական մտքի ու հայ մամուլի ողջ պատմության մեջ[26]: Եվ ոչ միայն: Հանդեսը իր համեստ դերն ունեցավ ազգային ինքնագիտակցության բարձ-րացման, զարթոնքի, ճաշակավոր սերունդ դաստիարակելու գործում: Ինքը՝ Լեոնյանը վկայում է. «1908 թ. Թիֆլիսում ձեռնարկեցի «Գեղարվեստ» գրա-կան-արվեստագիտական-երաժշտական հանդեսի հրատարակության: Թե՛

[23] **Լեոնյան** 1934, 230:

[24] Պատմաբանասիրական հանդես 1970, № 1, 233:

[25] Տե՛ս **Լեոնյան** 1963, 7:

[26] Տե՛ս **Գալստյան** 1979, 268:

խմբագրական, թե՛ հրատարակչական ամբողջ հոգսը վերցրել էի ինձ վրա: Նպատակ դրի ժամանակի մեր բոլոր լավագույն գրողներին և արվեստագետներին հրավիրել աշխատակցելու»[27]: Հանդեսի «Մեր ընթերցողներին» վերնագրով ուղերձում խմբագիրը գրում է. «Գեղարուեստը» պէտք է ապրի և ապրելով հանդերձ հետզհետէ առաջադիմէ: Մենք գեղարուեստի սիրու համար դնում ենք այստեղ մեր բոլոր ույժերը, նիւթական, բարոյական, ֆիզիքական, մեր 12-ժամեայ օրական աշխատանքը»[28]:

Նյութական հնարավորությունները թույլ չտվեցին նախատեսածի պես տարեկան 10 համար հրատարակել, սակայն տասնչորս տարում (1908–1922 թթ) հրատարակվելով ընդամենը յոթ գիրք, այնուամենայնիվ, «Գեղարվեստը» հայ մշակույթի պատմության համար դարձավ մնայուն արժեք:

Լեռնյանն իր առջև խնդիր էր դրել ներկայացնել ոչ միայն արվեստի ժամանակի հայ և թարգմանական լավագույն գործերն ու նրանց մասին վերլուծություններն ու քննադատականները, այլև գիտական պատշաճ մակարդակով բարձրացնել արվեստի տեսության, մշակույթի ու նաև մամուլի պատմության խնդիրները, գեղարվեստի դասավանդման մեթոդիկայի հարցերը և այլն: Այս մասին հավաստում է հանդեսի կառուցվածքն ու բաժինների նույնիսկ ոչ լրիվ թվարկումը՝ «Գեղարվեստի տեսականը», «Գեղարվեստի պատմականը», «Գեղարվեստի գրականը» «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում», «Մատենախոսական-քննական», «Երաժշտական երկասիրություններ» «Գեղարվեստական նամականի», «Պատկերահանդես» և այլն: Ամսագրի վերտառությունը հուշում էր, որ հանդեսում հիմնականում արծարծվելու են արվեստի խնդիրները: Ընդ որում, գեղագիտական խնդիրներին, գեղեցկություն եզրույթին նվիրված թեմաներով հոդվածների հեղինակը հիմնականում հենց Լեռնյանն էր[29]: Նա հնարավորություն էր ունեցել արվեստի մասին իր գիտելիքները հարստացնել՝ կրթվելով ժամանակի մեծ քաղաքների հմուտ մասնագետների մոտ: Ընդ որում Ռուսաստանում սովորելու կրթաթոշակի համար արդեն երկու աշխատությունների հեղինակ 23-ամյա Գարեգինը բացի Էջմիածնի հոգևոր այրերից, դիմել էր նաև 26-ամյա Հովհաննես Թումանյանին: Վերջինս աջակցում է իր հնարավորությունների սահմաններում՝ դիմելով իշխանուհի Մարիամ Թումանյանին, որն իր հերթին խոստանում է միջնորդել Խրիմյան Հայրիկին: Հայրապետը ընդառաջում է խնդրանքին, և 1896-ին

[27] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:
[28] Տե՛ս Գեղարվեստ 1908, № 1, 109:
[29] Տե՛ս Գեղարվեստ 1908, № 1, 1–6:

Լևոնյանը մեկնում է Մոսկվա՝ նկարչություն ուսանելու, այնուհետև 1897-ին ընդունվում և ավարտում է Պետերբուրգի Արվեստների ակադեմիան (1898–1901)՝ որպես Էջմիածնի թոշակառու սան[30], աշխատում է ակադեմիկոս Դմիտրիևի նկարչական արվեստանոցում: Նա իր կրթությունը շարունակում է նաև Լայպցիգում, որտեղ ձեռք է բերում փորագրական արվեստի հմտություններ և արվեստաբանի մասնագիտություն (1906):

Լինելով ժամանակի ամենից կրթված, ազգային գիտությանն ու մշակույթին արդեն իր ներդրումն ունեցած անվանի մտավորականներից մեկը՝ Լևոնյանին հաջողվեց «Գեղարվեստի» շուրջ համախմբել իր օրերի արվեստի, գիտության ու գրականության նշանավոր գործիչներին՝ Հովհ. Թումանյանին, Հովհ. Հովհաննիսյանին, Մուրացանին, Վրթ. Փափազյանին, Վ. Տերյանին, Ավ. Իսահակյանին և, իհարկե, Կոմիտասին: Լևոնյանի «բազմածախս ձեռնարկությունը»[31] մեծ խանդավառություն առաջացրեց հայկական գրական շրջանակներում:

«Գեղարվեստի» առաջին համարում առանձին հավելվածով տպագրվել էին հայ մտավորականների ու մշակույթի գործիչների ողջույնի ու խրախուսանքի խոսքերը: Շնորհավորում էին ոչ միայն Թիֆլիսից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Մոզդոկից, Երևանից, Էջմիածնից, այլև աշխարհի ամենատարբեր մասերից՝ Ամերիկայից, Փարիզից, Դանիայից, Բելգիայից, Մոսկվայից և Ռուսաստանի այլ վայրերից: Դանիել Վարուժանը գրում է. «Ինքս գեղեցիկի քուրմ մ' ըլլալով՝ կրնաք գուշակել, թե ինչ եռանդ կ'արթննայ մէջս, երբ կը տեսնեմ նմանօրինակ հանդեսներ, որոնք կոչված են ազգիս հաւաքական զգացումները ձևելու, ներդաշնակելու և ուղղելու զանոնք վայրկեան մը սարսափէն՝ երազանքին, և արիունէն՝ արևուն: Նոյն այս խանդով էր, որ ժամանակ մը հոգիս «Գեղունիի» էջերուն մէջ թրթռաց»[32]: Եվ քանի որ «Գեղունին» ընդմիջումներով էր հրատարակվում և 1906-ին լույս չէր տեսել, Վարուժանը մաղթում է, որ «Ձերինը անոր տեղը բռնէ, ընդլայնելով անոր հորիզոնը,- աշխարհականի հայացքին հորիզոնը»[33]: Շիրվանզադեն, ողջունելով Լևոնյանին Փարիզից, խոստանում էր ֆրանսիական թատրոնի մասին հոդված գրել: Իսկ Վ. Տերյանը գրում էր. «Այն տխուր հանգամանքը, որ արվեստը ոչ մի երկրում, ոչ մի ժողովրդի մեջ այնպիսի բիրտ ու կոպիտ արհամարհանք և անտարբեր ու զոհա-

---

[30] Տե՛ս ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1, 1489:

[31] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:

[32] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Գ:

[33] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Գ:

բերումի չի մատնուած որպէս մեր յետամնաց հայրենիքում, ստիպում է մի առանձին ուրախութիւնով ողջունելու Ձեր ձեռնարկությանը»[34]:

«Գեղարվեստը» միջազգային հանդես էր: Տպագրվում էին հայ հեղինակների զանազան հոդվածներ, որոնք ուրվագծում էին արևելքի և արևմուտքի արվեստների պատմությունը: Միաժամանակ արտատպվում և թարգմանաբար հրատարակվում էին ժամանակի՝ արվեստի հայտնի ամսագրերում լույս տեսնող օտարազգի հեղինակների նյութերը, այդ թվում ֆրանսիացի կոմպոզիտոր, կոնսերվատորիայի հարմոնիայի դասախոս, Փարիզի համայնքային դպրոցների երգի ծրագրի գլխավոր պատասխանատու, պրոֆեսոր Օգյուստ Շափյուի («Երաժշտական արուեստը դպրոցում»)[35], Ֆրանսիայի Դեկորատիվ արվեստի ազգային դպրոցի պրոֆեսոր Գաստոն Քենիուի («Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակութիւնը»)[36], Պրոֆ. Օրշանսկու («Նկարչություն և քանդակագործություն», «Երաժշտական ստեղծագործություններ»)[37] Յանովսկու («Քանդակագործութիւն, նկարչութիւն և երաժշտութիւն)[38], Վ.Ա. Մարքիզ Տրեսսանի («Իսլամական նկարչություն»)[39]և այլազգի այլ հեղինակների հոդվածներ:

Խմբագիրը

Հանդեսի խմբագիրը հոդվածներ ուներ բոլոր ուղղությունները ներկայացնող բաժիններում, և հենց «Գեղարվեստի» էջերում դրսևորվեց Լևոնյանի գիտական բազմակողմանի օժտվածությունը, մեծ ներդրումը հայագիտության տարբեր ոլորտներում: Ընթերցողը նրա հոդվածների միջոցով էր ծանոթանում գեղագիտական հարցերի, գեղեցիկի, արվեստում ռեալիզմի ու իդեալիզմի, սիմվոլիզմի դրսևորումներին («Իդեալիզմը և ռեալիզմը գեղարուեստի մէջ» (1911, № 4), «Իդեալիզմ, ռեալիզմ, սիմբոլիզմ», «Հայոց գեղարուեստի պատմութեան ներածութիւնը» (1913, № 5)), պատկերացում կազմում հայ միջնադարյան նկարչության, մանրանկարի ոճի մասին («Ուրուագիծ միջնադար-

---

[34] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Բ:

[35] Տե՛ս **Շափյու Օգյուստ** 1908, Գեղարուեստ 1908, № 2, 82–87: Օգյուստ Շափյուի հոդվածը արտատպվել էր 1908 թ. Փարիզի «Արվեստը դպրոցում» գրքից (**Chahpuis** 1908, 109–112).

[36] **Քենիուի Գաստոն** 1913, Գեղարվեստ, 1913, № 5, էջ 133–137: Հոդվածն արտատպվել էր «Արվեստը դպրոցում» գրքից (**Quénioux** 1908, 89–108).

[37] Գեղարվեստ 1908, № 2, 11–23:

[38] Գեղարվեստ 1909, № 3, 20–24:

[39] Գեղարվեստ 1921, № 7, 55–65:

եան հայ նկարչութեան.Ներածութիւն» (1908, № 1), («Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան. Մանրանկարի ոճը», (1911, № 4)), թերթում թատրոնի, մամուլի («Գեղարվեստական հայ մամուլը նախքան «Գեղարուեստը» (Թռուցիկ հայեացք)» (1908, №1)), երաժշտության, ճարտարապետության պատմության նորանոր էջեր («Հայոց գեղարուեստի պատմութեան ներածութիւնը» (1913, № 5)) և այլն:

Լևոնյանը նաև գրաքննադատ էր և ձեռքը պահում էր ժամանակի գրականության զարկերակի վրա: Միայն «Գեղարվեստում» տպագրվեցին Լևոնյանի գրախոսականները Շուշանիկ Կուրղինյանի «Արշալույսի ղողանջների» (1908, № 1), Գաբրիել Սունդուկյանի «Բաղնիսի բոխչա» կատակերգության (1908, № 2), Լևոն Լարենցի «Դրախտի երգեր» Ա. Անկումէն առաջ, Բ. Անկումէն յետոյ (1908, № 2), Յագարելու «Սիբիրական» կատակերգության (1908, № 2) մասին: 1400 տպաքանակ ունեցող «Գեղարվեստը» այնպիսի մեծ համարում ու հեղինակություն ուներ գրական շրջաններում, որ նրանում տպագրված հոդվածները առանձին ուսումնասիրության էին արժանանում. հանդեսի նյութերի քննությանը նվիրված առանձին գրախոսականներ էին տպագրվում: Ն. Աղբալյանի, Վարդգես Ահարոնյանի, Հ. Բժշկյանի, Արշակ Վարդանյանի այդ քննադատականներում ընդգծվում էր և՛ դրականն ու արժեքավորը, և՛ միաժամանակ արվում էին դիտողություններ[40]:

«Գեղարվեստի» Ա գրքի համար խմբագիրը ստացավ հայ գրողների լավագույն ստեղծագործությունները՝ Հ. Թումանյանի «Հայոց վիշտը», Ավ. Իսահակյանի «Երազը», «Կարոտը», Հովհ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը», Վ. Տերյանի «Ցնորքը» և այլն: Հանդեսում իր տեղն ուներ նաև արտասահմանյան գրականություն՝ Բալմոնտ, Բաբա Թահիր և այլն: Հետագայում Թումանյանը այնքան բարձր էր գնահատում «Գեղարվեստը», որ նոր գործ տալու Լևոնյանի դիմումներին՝ պատասխանում էր. «Ամեն բան չի կարելի տալ «Գեղարվեստին»»[41]:

Հանդեսի խմբագրական ժողովներին մասնակցել են Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Հակոբյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Տիգրանյանը և ուրիշներ: Ուշագրավ է, որ գրական բաժնի համար ստացված նյութերը կարդում էին առանց հեղինակների անունները տալու՝ ընկերների անաչառ դրական թե բացասական կարծիքները ստանալու նպատակով: Հայտնի է, թե

[40] Տե՛ս Հորիզոն 1910, № 132, 1912, № 76–77, 1912, № 115, 1917, № 6, 1918, № 212, 214, Սուրհանդակ 1910, № 122, 1912, № 497–498, № 502–503, Հովիտ 1910, № 7, 11:

[41] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:

ինչպիսի մեծ աշխուժություն է առաջացրել Վարուժանի «Ո՛վ Լալագէ»[42] բանաստեղծության ընթերցումը: Ներկաները ամենքն էլ ընդունել են գրվածքի արժանիքը, ոճի, պատկերների գունագեղությունը, սակայն ձեռնպահ են մնացել տպագրելու որոշումը կայացնելիս: Իսկ Թումանյանը, ընդունելով Վարուժանին «որպես մեծ բանաստեղծի», դեմ չէր տպագրությանը, սակայն կանխազգում էր, որ Լեռնյանը մեծ պատասխանատվություն է վերցնում իր վրա և հարձակումներն անխուսափելի կլինեն: Առաջինը Շիրվանզադեն էր, որ ընկնելով ծայրահեղության մեջ՝ քննադատում է Լեռնյանին՝ «Գեղարվեստի» 4-րդ գրքի առիթով գրելով երկու քննադատական: «Բողոքում եմ զզվանքով» հոդվածում նա մեղադրում է Լեռնյանին Արամ Չարըգի «մոդեռնիզմը կապկող» «Աղջիկ մը» ոտանավորի տպագրության համար, իսկ «Ահա մի ուրիշը» հոդվածում նկատի ունենալով «Ո՛վ Լալագէն»՝ մեղադրում է Լեռնյանին «պոռնոգրաֆիա» տպագրելու համար[43]: «Վերջին տարիները մոդեռնիզմի հայ կապիկները աշխատում են հայ կուսական գրականությունն ապականել այնպիսի «բանաստեղծական» մոտիվներով, որոնք նողկանք կարող են պատճառել քիչ թե շատ կիրթ ճաշակ ունեցող ամեն մի ընթերցողի,- գրում է Շիրվանզադեն...- զայրանում եմ ոչ այնքան հեղինակների երևակայության, սնանկության, ճաշակի կոպտության և զգացումների անմաքրության դեմ, որքան այդ հանդեսների խմբագիրների դեմ, որոնք չեն քաշվում տպել այդ տեսակ հակագեղարվեստական գոհարներ: Այս անգամ գեղարվեստի ամոթխածության դեմ մեղանչողը ինքը՝ գեղարվեստն է, այսինքն՝ պ.Լեռնյանի «Գեղարվեստը»»[44]: «Ահա մի ուրիշը» հոդվածում Վարուժանի բանաստեղծությունը Շիրվանզադեն անվանում է «ավելի զազրելի» և նկատում է, որ «Դանիել Վարուժանի պես էրոտոմանները մեզ իրանց պոռնկության նմուշները ծախում են բանաստեղծության տեղ[45]: Ծավալվում է բանավեճ, որտեղ Շիրվանզադեին պատասխանում են Վ. Ահարոնյանը (Վ. Մենակ)[46], Արսեն Տերտերյանը և Հակոբ Հակոբյանը[47]: Բանավեճը դուրս է գալիս Թիֆլիսի սահմաններից: Էջմիածնի «Արարատն» է տպագրում Գ. Ալթունյանի գրախոսականը

[42] «Ո՛վ Լալագե»-ն տպագրվեց Գեղարվեստ 1911, № 4, 62–63:

[43] Տե՛ս **Շիրվանզադե** 1962, 474:

[44] **Շիրվանզադե** 1962, 723:

[45] **Շիրվանզադե** 1962, 476:

[46] Տե՛ս Հորիզոն, 1912, № 76, 79:

[47] Հորիզոն 1912, № 87, 88:

«Գեղարվեստի» 4-րդ գրքի մասին, որտեղ հատուկ անդրադարձ է կատարվում Վարուժանի ստեղծագործությանը[48]:

«Գեղարվեստի» պատմությունից այս դրվագը ցուցադրում է Լևոնյան խմբագրի և՛ լայնախոհությունը, խմբագրական ժողովներին նրա՝ միայն արվեստի ու գրականության շահերից ելնող մոտեցումները, և՛ ոլորտի հեղինակավոր անձանց ականջալուր լինելը և՛ միաժամանակ ինքնուրույն որոշումներ կայացնելը, համարձակությունը գրական նորարարական հոսանքներին ընդառաջ գնալու գործում: Շիրվանզադեի հետ գրական ուղղությունների հարցում տարաձայնությունները շարունակվում են նաև հետագայում: Լևոնյանի «Ահա և իմ պատասխանը» հոդվածը գրվում է դրամատուրգի հետ ռեալիզմի ու նատուրալիզմի մասին բանավեճի շրջանակում[49]: «Գեղարվեստի» խմբագրին Շիրվանզադեն պատասխանում է «Իմ վերջին խոսքը» հոդվածով[50]: Բանավեճի առարկան ռեալիստական մոտեցմամբ գեղեցիկի և ճշմարտի հարաբերակցության խնդիրն էր: Լևոնյանը համոզված էր, որ ամեն մի ճշմարիտ դեռևս գեղեցիկ չէ, իսկ Շիրվանզադեն նույնացնում է այդ երկու հասկացությունները՝ բանաձևելով «Չկա գեղեցկություն առանց ճշմարտության, չկա ճշմարտություն՝ առանց գեղեցկության»[51]:

Մանկավարժը

Արվեստի քաղաքակրթական դերի, արվեստով ազգեր, հասարակություններ կրթելու անհրաժեշտության գիտակցումը Լևոնյանին տարավ մանկավարժության ոլորտ, ընդ որում թե՛ այդ մասին հանրությանը տեսական գիտելիքներ հաղորդելու, թե՛ գործնական քայլեր կատարելու առումով: Իր մանկավարժական գործունեությունը Լևոնյանը ծավալել է նախ Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանում դասավանդելով գեղարվեստի տեսություն և նկարչություն (1903–1906): Այնուհետև Թիֆլիսում բացել է նկարչական դասընթացներ և կրթել նկարչության ապագա ուսուցիչներ, 1910–1911 թթ. դասավանդել է Ներսիսյան դպրոցում (1910–1911), 1926–1928-ին՝ Երևանի գեղարվեստական տեխնիկումում, այնուհետև դասախոսել է Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում: Արվեստների դերը, գեղեցիկի սերմա-

---

[48] Արարատ 1915, № 5–6, 525–538:
[49] Մշակ 1917, №№ 20, 23, 24:
[50] Մշակ 1917, № № 26, 27: Տե՛ս նաև **Շիրվանզադե** 1962, 559:
[51] **Շիրվանզադե** 1962, 561:

նումն ու գեղագիտական բարձր ճաշակի ձևավորումը Լևոնյանը կարևորում էր հատկապես սերունդների դաստիարակության հարցում: Մանկավարժ Լևոնյանը հեղինակեց նաև գեղագրություն, նկարչություն և վայելչագրություն առարկաների դասագրքեր[52]:

Հանդեսի «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժնում զետեղված հոդվածներում արտացոլվում էին երեխայի գեղագիտական դաստիարակության մասին Գ. Լևոնյանի, Հովհաննես Ակունյանի, Արտաշես Տիրացյանի և եվրոպական արվեստաբանների՝ Օգյուստ Շափյուի, Գաստոն Քենիուի մոտեցումները մանկան գեղագիտական հայացքների ձևավորման ու զարգացման հարցում: Բաժնի վերնագիրն անգամ հուշում է, թե մասնավորապես Լևոնյանը որքան էր կարևորում երեխայի գեղագիտական դաստիարակության հարցում դպրոցին զուգահեռ նաև ընտանիքի դերը: Իսկ կրթել ընտանիքը, նշանակում էր կրթել ողջ հասարակությունը. այդ կրթության լավագույն միջոցներից մեկն էլ Արևմուտքի փորձի կիրառումն էր հայկական դպրոցներում: Մանկավարժական իր հայացքներն արտահայտելիս ինքը Լևոնյանը վկայակոչում էր ֆրանսիացի մանկավարժ Մարսել Բրաունշվիգի աշխատություններից «Արվեստը և երեխան. ակնարկ գեղագիտական կրթության մասին» ուսումնասիրությունը[53]: Նրա կարծիքով երաժշտություն ու նկարչություն առարկաները «զարգացնելու են մատաղ հասակի լսողութիւնն ու տեսողութիւնը, զարգացնելու են յիշողութիւնը, գեղեցիկի ճաշակը, ազնուացնելու են նրա հոգին և բարքը»[54]: Հանդեսի խմբագիրը ընթերցողի հետ անմիջական կապի՝ նամականության միջոցով հնարավորություն էր ընձեռել յուրաքանչյուր ուսուցչի կամ աշակերտի մեթոդական ցուցումներ ստանալ խմբագրությունից: Մանե Մկրտչյանը իր «Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» հոդվածում նկատում է. «Ակնհայտ է, որ Գ. Լևոնյանը ոչ միայն բարձրաձայնում էր գեղարվեստական կրթության ասպարեզում առկա խնդիրները, այլև նպատակ էր հետապնդում գոնե տեսական առումով որոշ բացեր լրացնել»[55]: Հոդվածագիրը իրավացիորեն հավելում է, որ հանդեսի ««Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժինն առանձնանում է թե՛ գա-

---

[52] Տե՛ս **Լևոնյան** 1908, **Լևոնյան** 1909:

[53] Տե՛ս **Braunshvig** 1907.

[54] Գեղարվեստ 1908, № 1, 69:

[55] **Մկրտչյան** 2020, Պատմաբանասիրական հանդես № 1, 143:

դափարական առումով, թե՛ հոդվածների արդիականությամբ ու բարձրացվող խնդիրների կարևորությամբ»[56]:

Հուշագիրը

Հուշագրությունը կարևոր բնագավառ է գրողի և առհասարակ գիտության ու արվեստի մեծերի կյանքի ու ստեղծագործության ներթափանցումը, նրանց կենսապատումը ներկայացնելու գործում: Հուշերի միջոցով, մանավանդ եթե հուշագիրը նշանավոր անձ է, ոչ միայն բացահայտվում են տվյալ հուշագրի կամ անձի կյանքի որոշ մանրամասները, նկարագիրը, նրա ներկայացրած, այլև պատմության սեփականությունն են դառնում կոնկրետ անհատի ժամանակն ու միջավայրը: Հուշագրության ու գրական ստեղծագործության ներդաշնակ միասնություն է ուղեգրության ժանրը: Անվանի հայագետը թե՛ ուղեգրության, թե՛ հուշագրության ասպարեզում նույնպես ստեղծել է ուշագրավ երկեր: 1912–1913 թթ. Լևոնյանը ճամփորդել է Արևմտյան Եվրոպայում և իր տպավորությունները ամփոփել է «Աշխարհե-աշխարհ կամ 20.000 վերստ Եվրոպայում» ուղեգրությունների մեջ: Լևոնյանի հուշերը նաև իր ժամանակի վավերագրերն են, Կոմիտասի, Թումանյանի, Շիրվանզադեի և այլ նշանավոր անձանց կյանքի վավերագրերը: Դրամատուրգի մասին հուշերում շեշտում է, որ չնայած մամուլում գրական հարցերի շուրջ միմյանց դեմ նիզակներ էին ճոճում, բայց մնում էին լավ բարեկամներ: Կոմիտասի հետ ծրագրեր մշակելու մասին խոսելիս հիշում է, թե ինչպես Էջմիածնում հանդես բացելու դիմումը մերժեց Երևանի նահանգապետը և այլն:

Միայն Հովհաննես Թումանյանի մասին հուշերը բավական են պատկերացում կազմելու Լևոնյան հուշագրի մասին: Այստեղ իսպառ բացակայում են անձնական սուբյեկտիվ գնահատականներն ու մեկնությունները, ես-ի շեշտադրումը, փաստերը ըստ ինչ-ինչ անհատական ու քաղաքական նպատակների հարմարեցնելը և այլ հատկանիշներ, որոնք կարող են թերահավատություն ներշնչել նկարագրված իրողությունների հավաստիության նկատմամբ: Ամենայն հայոց բանաստեղծի մասին Լևոնյանի հուշերում հառնում է Թումանյանի մարդկային կերպարը՝ իր ողջ հմայքով: Բանաստեղծը ներկայանում է իբրև ազգային գործիչ, գրական մշակութային կյանքի ղեկավար՝ Հայ գրչի մշակների, Հայարտան, ՀՕԿ-ի նախագահ, իբրև մեծ հաշտարար, որ կարողանում էր հակառակորդ դարձած մշակույթի գործիչներին՝ Ղ. Աղայանին ու Պ. Պռոշյանին, Լեոյին ու Ավ. Իսահակյանին, Հակոբ Գենջյանին ու Աթ.

[56] **Մկրտչյան** 2020, Պատմաբանասիրական հանդես № 1, 146:

Խնկոյանին հաշտեցնել, կարողանում էր ապահովել մշակութային կյանքի ներդաշնակությունը: Հուշագիրը ընդգծում է բարերար Թումանյանի նրբանըկատությունը, աննկատ, առանց արժանապատվությունը վիրավորելու «թաքուն» «բարձի տակ»[57] գումար թողնելու սովորությունը: Երբ աղքատությունը թակում էր յուրաքանչյուր հայի դուռը, Թումանյանը միջոցներ էր գտնում գրողներին ու արվեստագետներին ինչ-որ չափով պարենով ապահովելու, դրա համար էլ արվեստից ու գրականությունից հեռու շատերն էին անդամագրվում նրա նախագահած ընկերություններին և Լառնյանի խոսքերով Հայարտունը դառնում էր Հացառտուն, իսկ Գրչի մշակների միությունը՝ Գրչակոթների միություն:

Հուշագրության ժանրին բնորոշ է հենց հուշագրի անձնական կյանքի ինչ-ինչ դրվագների ներկայացում, սակայն Լառնյանը շատ ավելի ընդգծում է ծնողների ու Թումանյանի առնչությունները: Գարեգինի մայրը Թումանյանի «խրախուսանքով» 65-ամյա հասակում «սկսում է զբաղվել գրականությամբ»: Լառնյանը հիշում է, որ մի առիթով, երբ բանաստեղծն իրենց տանն էր, մայրը նրա համար գրի առած հայկական հեքիաթ է կարդում՝ «Ոսկի մազերով աղջիկը»: Թումանյանը առաջարկում է շարունակել գրի առնել այդպիսի հեքիաթներ և առանց մշակելու որպես նյութ տրամադրել գրողներին: Լառնյանը գրում է. «Այս խոսակցությունից հետո մայրս մինչև իր մահը զբաղվում էր «գրականությամբ».... ժամերով կռացած գրում էր ու գրում. երբ նկատողություն էինք անում, որ թողնի այդ պարապմունքը, նա վշտանում էր. «Ընչի չեք թողնի գրեմ, դուք Թումանյանից լա՞վ գիտեք, ինչը պետք է, ինչը պետք չէ»»[58]:

Լառնյանի հուշերում անջնջելի հետք են թողել հոր՝ Ջիվանու թաղման օրը (1909 մարտի 1) Մետեխի բանտի պատուհաններից երկու թաշկինակների թափահարումը, որը գրավել էր բոլոր հուղարկավորների ուշադրությունը. «Նայում եմ և ո՞ւմ տեսնեմ- Հովի. Թումանյանին և Ավ. Իսահակյանին, որոնք, ձեռները լուսամուտի երկաթյա վանդակից դուրս հանած, թափահարում էին թաշկինակներով, իբր իրենք ևս մասնակից են հուղարկավորության և սգահանդեսին: Այդ ինձ համար մեծ մխիթարություն էր»[59]:

Թումանյանի մասին հուշերում նկատվում է Լառնյան հուշագրի ևս մի առանձնահատկություն, որը փաստում է հուշերի հեղինակի գիտնական լինե-

[57] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 436:

[58] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 433:

[59] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 433:

լը: Նա կատարում է թեմատիկ բաժանումներ հուշի յուրաքանչյուր մաս վերնագրում և ասելիքը ներկայացնում էր համակարգված: Միայն Թումանյանի մասին հուշը ունի 18 ենթավերնագիր՝ «Րաֆֆու բնակարանում», «Թումանյան և Վարուժան», «Թումանյանը հաշտարար» և այլն:

Եզրակացություններ

Քսաներորդ դարասկիզբը հայ մշակույթի ու հայագիտության ոսկեդարն էր, և Գարեգին Լևոնյանն այդ արգասաբեր շրջանի լավագույն հայագետների շարքում իր մնայուն տեղն ունի: Հսկայական է նրա ավանդը հայ բանասիրության, արվեստաբանության զարգացման գործում: Թեև մեծ են Գ. Լևոնյանի ներդրումները հայագիտության ամենատարբեր բնագավառներում, նրա տարերքը, սակայն, մամուլի պատմությունն էր, աշուղագիտությունը՝ ոլորտներ, որոնցում Լևոնյանը ստեղծեց մնայուն արժեքներ: Նրա կազմած ժամանակագրական մայր ցուցակները՝ հայ լրագրության 140-ամյա շրջանի նյութի ընդգրկման լիակատարությամբ, մատենագիտական տվյալների մատուցման կատարելությամբ, հայագիտությանը մատուցած նրա անգնահատելի ծառայության հավաստումն են:

Արվեստաբանի, գրականագետի, մամուլի պատմագրի և խոշոր հայագետի ուսումնասիրությունները հասցեագրված էին ոչ միայն գիտական շրջանակներին, այլև ողջ հանրությանը: Բացի հայագիտության ոլորտի նշանավոր գիտնական լինելուց, նա նաև ազգային արվեստի ու գրականության հանրահռչակողներից էր՝ և նրա ողջ գործունեությունն ուղղված էր մշակույթի ու գեղարվեստի դաստիարակության միջոցով ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Աշխարհի ամենահեղինակավոր բուհերում կրթված և արվեստաբանի կոչումով հայրենիք վերադարձած Լևոնյանը իրականացրեց գեղարվեստական ճաշակ հղկելու և բարձրացնելու իր առաքելությունը այնքան, որքան թույլ տվեց իր ժամանակը: Իսկ այդ ժամանակը լի էր պատմական ահավոր ու ողբերգական ցնցումներով, պատերազմներ, ցեղասպանություն, հեղափոխություններ, հետևաբար նա արեց անհնարինը, ինչպես մեր հայագիտության մյուս մեծերը: Այսօր էլ Գարեգին Լևոնյանի դերակատարումը հայագիտության մեջ գնահատվում է հավուր պատշաճի: Նրան անվանում են «շնչավոր հանրագիտարան», «վերարթնացման առաքեալ»[60]:

[60] Ազատ օր, 6.11.2018:

Իր նորարարական հետազոտություններով մեծանուն հայագետը իր տաղանդավոր սերնդակիցների հետ վերահաստատեց հայ ազգի գոյության իրավունքը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ազատ օր 2018, օրաթերթ, Աթենք, նոյեմբերի 6:

Ազգագրական հանդես 1903, Թիֆլիս, ազգագրական պատկերազարդ կիսամյա պարբերական, գիրք 10, էջ 39–93, 1904, գիրք 11, էջ 129–196, գիրք 12, էջ 84–94, գիրք 13, էջ 87–111:

Ազգագրական հանդես 1911, գիրք 21, էջ 225–239:

Ալթունյան Գ. 1912, Գեղարվեստ, Չորրորդ տարի, 1911, Արարատ ամսագիր, Էջմիածին, թիվ 5–6, էջ 525–538:

Արասխանյան Ա. 1895, Լևոնյանց Գարեգին: Ջիվանի: Հայոց պարբերական մամուլը, Մուրճ, Թիֆլիս (1889–1907), № 5, 673–680:

Գեղարուեստ 1908, գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս խմբագրութեամբ Գարեգին Լեւոնեանի. Առաջին տարի, Մարտ, Թիֆլիս, տպ. «Ելեքտրաշարժ» Օ.Ն. Աղանեանցի (Պօլից 7), № 1, էջ 1–6, 69, 109 Հավելված, էջ Բ, Գ, №2, էջ 82–87, 11–23:

Գեղարվեստ 1909, № 3, էջ 20–24:

Գեղարվեստ 1911, №4, տպ. Մ. Մարտիրոսյանցի, №3, էջ 62–63:

Գեղարվեստ 1913, № 5, արտասահմանյան բացառիկ №1, Վենետիկ, տպ. Մխիթարեան, էջ 133–137:

Գեղարվեստ 1921, № 7, տպ. Սովնարխոզի, (Պուշկին №3), էջ 55–65:

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, թիվ 1489:

Գալէմքեարեան Գր. 1893, Պատմութիւն հայ լրագրութեան. ի սկզբանէ մինչեւ մեր օրերը h. Ա, Վիեննա, Մխիթ. տպ., 226 էջ:

Գալստյան Թ. 1979, Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Երևան, ԵՊՀ հրատ., 268 էջ:

Գուլոյան Ա. 1914, Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթները (29-րդ երեկույթ). Գ. Լևոնյանի բանախոսությունը. Հորիզոն, 1914, № 25:

Զարբհանալեան Գ. 1883, Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագր. գիտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց: 1565–1883, Վենետիկ. 734 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, լրամշակված հրատարակություն, h. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրակ. ինստ. և ԹԹ հրատ., 624 էջ:

Իսահակյան Ավ. 2020, ԵԼԺ 14 հատորով, h. 11, Հուշեր, հոդվածներ գրականության և արվեստի մասին, գրախոսություններ, ելույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 810 էջ:

Իսահակյան Ավ. 2021, ԵԼԺ 14 հատորով, h. 14, Նամակներ (1924–1957), Երևան, Էդիթ-Պրինտ հրատ., 1136 էջ:

Լևոնյան Գ. 1892, Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, Գ. Սանոյանցի տպ., 151 էջ:

Լևոնյան Գ. 1895, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, տպ. Աբ. Մալխասեան, 570 էջ:

Լևոնյան Գ. 1905, Գծագրություն և նկարչություն, մաս 1, Թիֆլիս, «Կուլտուրա», 56 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Ա, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Բ, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Գ, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1909, Գծագրություն և նկարչություն, մաս 2, Թիֆլիս, «Կուլտուրա», 60 էջ:

Լևոնյան Գ. 1914, Աշխարհե-աշխարհ կամ 20.000 վերստ Եվրոպայում, հ. 1, Թիֆլիս, «Հերմես», 32 էջ:

Լևոնյան Գ. 1934, Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934), Երևան, հրատ. Մելքոնյան ֆոնդին, 230 էջ:

Լևոնյան Գ. 1941, Թատրոնը հին Հայաստանում, Երևան, Հայպետհրատ, 122 էջ:

Լևոնյան Գ. 1944, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, Հայպետհրատ, 106 էջ:

Լևոնյան Գ. 1958, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, Հայպետհրատ, 255 էջ:

Լևոնյան Գ. 1959, Հուշեր, Երևան, Հայպետհրատ, 203 էջ:

Լևոնյան Գ. 1963, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 504 էջ:

Հակոբյան Ա. 2016, Հայ պարբերական մամուլի մատենագիտական կարևոր հրատարակություններ (XIXդ երկրորդ և XXդ. առաջին կեսերին), Հայագիտական հանդես, № 4 (34), էջ 118:

Հանդես գրականական և պատմական 1896, գիրք 7, Մոսկվա, տպ. Ք. Բարխուդարյանի, էջ 280–316:

Հարո (**Նիկողայոս Տեր-Հարությունյան**) 1878, Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ, Թիֆլիս, 135 էջ:

Հովիտ 1910, ազգային հասարակական գրական շաբաթերթ (1910-1917), Թիֆլիս, տպ. Վրաց. Հրատ ընկ. № 7, էջ 11:

Հովիտ 1914, №6, էջ 93–94:

Հորիզոն 1910, Հասարակական գրական օրաթերթ, Թիֆլիս, տպ. «Печатное дело», Կիլածեի (Վելյամինովսկայա փող.), № 132:

Հորիզոն 1912, №№ 76, 79, 76–77, 115:

Հորիզոն 1914, № 25:

Հորիզոն 1917, № 6:

Հորիզոն 1918, №№ 212, 214:

Մկրտչյան Մանե 2020, Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստի» էջերում, Պատմաբանասիրական հանդես, № 1, էջ 143:

Մշակ, 1894, գրական քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, տպ. «Ծերեթելի և ընկերության», № 105:

Մշակ 1914, Քաղաքական և գրական լրագիր, Թիֆլիս, տպ. «Экономя» Большая-Ванская փող., №№ 36, 139, 140:

Մշակ 1917, №№ 20, 23, 24, 26, 27:

Մուրճ 1894, քաղաքական-հասարակական-գրական ամսագիր (1889–1907) Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռոտինեանցի (Գոլովինյան փող. № 41) № 6, էջ 924–926:

Մուրճ 1895, № 5, էջ 673–680:

Շափյու Օգյուստ 1913, Երաժշտական արուեստը դպրոցում, «Գեղարվեստ», Վենետիկ, № 5, էջ 133–137:

Շիրվանզադե 1962, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 10, Երևան, Հայպետհրատ, 723 էջ:

Պատմաբանասիրական հանդես 1970, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., №3, էջ 230, 233:

Պատմաբանասիրական հանդես 2020, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., № 1, էջ 143:

Պարույր 1914, Հայ գրողների հերթական 29-րդ երեկոյթը,Հովիտ, № 6, 93–94:

Սայաթ-Նովա 1931, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու. Ներածություն Գ. Լևոնյանի, Առաջաբան Պ. Մակինցյանի, Երևան, Հայպետհրատ, 196 էջ:

Սովետական արվեստ 1957, օրգան Հայկական ՍՍՌ մինիստրության, Երևան, №11, էջ 71:

Սովետական գրականություն 1941, գրական-գեղարվեստական տեսական-քննադատական հանդես, Հայաստանի սովետական գրողների միության օրգան, Երևան, № 2, էջ 61–65:

Սուրհանդակ 1910, գրական, քաղաքական-հասարակական և առևտրա-արդյունաբերական անկախ լրագիր, Թիֆլիս, տպ. «Կուլտուրա», № 122:

Սուրհանդակ 1912, №№ 497–498, 502–503:

Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1930, Երևան, №4, էջ 160–178:

Քենիու Գաստոն 1913, Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակությունը, «Գեղարվեստ», № 5, Վենետիկ, Մխիթարյան տպ. էջ 133–137:

Костанян К. 1913, Летопись на камнях. Сост. К. Костанян. Предисловие (на русском языке) Н. Я. Марра. СПб., изд. Импер. акад. наук, 1913.

Braunshvig M. 1907, L'art et l'enfant: essai sur l'education esthntique, Toulouse. Paris.

Chahpuis 1908, L'Art musical à l'école.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz Jourdain. Paris, pp. 109–112.

Quénioux, Gaston 1908, Le Dessin a l'école et l'Éducation du goût. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain, Paris: Larousse, pp. 89–108.

ПОДВИЖНИК АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ (ОЧЕРК АРМЕНОВЕДЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ГАРЕГИНА ЛЕВОНЯНА)

ОВАНЕСЯН С.

Резюме

Ключевые слова: Гарегин Левонян, арменоведение, «Гехарвест», ашуговедение, книгопечатание, Багдасар Дпир, мемуаристика.

Начало двадцатого столетия было «золотым веком» армянской культуры и арменоведения, и Гарегин Левонян занимает особое место в ряду лучших учёных-арменоведов той плодотворной эпохи. Огромен его вклад в дело развития армянской филологии и искусствоведения. Г. Левонян стоит у истоков формирования гуманитарного направления в науке и является одним из основоположников этого направления в арменоведении. Его научно-исследовательские труды затрагивают самые разные области армянской филологии, культуры и искусства: ашуговедение, изобразительное искусство, эстетика истории и теории литературы, искусства книгопечатания, армянского театра и истории армянской периодики. В кругу научных интересов Г. Левоняна всегда находились также художественные произведения классиков русской и зарубежной литературы.

Несмотря на широту интересов Г. Левоняна и его выдающийся вклад в самые разные сферы арменоведения, его главным пристрастием оставалась история периодической печати, а также ашуговедение – области, в которых Левонян создал фундаментальные ценности. Составленные им хронологические сводные списки имеющей 140-летнюю историю армянской периодики являются лучшим подтверждением неоценимости его заслуг перед арменоведением.

Г. Левонян был не только выдающимся учёным-арменоведом, но и одним из пропагандистов и популяризаторов национальной культуры, литературы и искусства; вся его деятельность была направлена на повышение национального самосознания посредством изучения культуры и искусства.

THE DEVOTEE OF ARMENIAN CULTURE
(AN OUTLINE OF THE SCIENTIFIC ACTIVITY OF GAREGIN LEVONYAN IN THE SPHERE OF ARMENIAN STUDIES)

HOVHANNISYAN S.

Summary

Key words: Garegin Levonyan, Armenian studies, Gegharvest, ashug studies, book printing, Baghdasar Dpir, memoirs.

The beginning of the twentieth century was the “golden age” of the Armenian culture and Armenian studies, and Garegin Levonyan has a special place among the best Armenian scholars of that fruitful era. His contribution to the development of Armenian philology and art criticism is paramount. With his valuable research, he stands at the origins of the formation of Human sciences in Armenia and is one of the founders of this direction in Armenian Studies. His research works cover a variety of fields of Armenian philology, culture and art: Ashug studies, fine arts, aesthetics of the history and theory of literature, the art of printing, Armenian theater and the history of Armenian periodicals. G. Levonyan's scientific interests have always included the artistic works of the classics of Russian and foreign literature.

Despite the large scope of G. Levonyan's interests and his outstanding contribution to various fields in Armenian Studies, his main inclination has always been towards the history of the periodical press, as well as Ashug Studies – the areas in which Levonyan created fundamental values. Compiled by Levonyan himself, the chronological summary lists of Armenian periodicals having a history of 140 years, with their completeness and inclusiveness, the perfection of the presentation of bibliographic data, are the best confirmation of his inestimable services to Armenian Studies.

G. Levonyan was not only an outstanding scholar of Armenian Studies, but also one who advocated and popularized national culture, literature and art; all his activities were aimed at improving national self-consciousness through the study of culture and art.

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ

lingualal51@mail.ru

DOI: 10.54503/1829-4073-2022.2.175-188

ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՎԵՐԱՑԱՐԿՎԱԾ ՄԵԽԱՆԻԶՄ

Բանալի բառեր՝ փոխակերպում, վերացարկում, բառակապակցություն, բարդություն, նախածանցման կաղապար, վերջածանցման կաղապար, ածանցակերպ:

Ներածություն

Լեզուն օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները և նրանց բնորոշ հատկանիշներն արտացոլում է որոշակի կաղապարների միջոցով, որոնք պայմանավորված են տվյալ լեզվակիր հանրության լեզվամտածողությամբ և համապատասխանում են նրա վերացարկված մտածողության մոդելներին:

Օբյեկտիվ իրականության արտացոլման գործընթացում լեզուն և գիտակցությունը հանդես են գալիս միասնաբար. առանց մեկի ակտիվ գործունեության, արտացոլման գործընթացը չի կարող կայանալ. դրանք փոխադարձաբար կապված են միմյանց և լրացնում են իրար, և հնարավոր չէ առաջնահերթություն տալ դրանցից մեկն ու մեկին: Լեզվական արտացոլումը լեզվի և գիտակցության բնագավառներից անցնում է լեզվի և մտածողության ոլորտ, որտեղ կարևորվում է լեզվամտածողության դերը՝ արտաքին աշխարհի արտացոլման համապատկերում: Օբյեկտիվ իրականության առարկաները, իրերը և նրանց բնորոշ հատկանիշները տարբեր կերպ են արտացոլվում լեզվական տարբեր հանրությունների լեզվական քարտեզում, որ պայմանավորված է այդ հանրությունների լեզվամտածողության տարբերություններով. յուրաքանչյուր լեզվակիր հանրություն ունի իրեն բնորոշ լեզ-

* *Հոդվածը ներկայացվել է 25.11.21, գրախոսվել է 25.11.21, ընդունվել է տպագրության 22.08.22:*

վամտածողություն, որ որոշում է արտաքին աշխարհի լեզվական արտացոլման վերացարկվածության աստիճաններն ու արտացոլման մակարդակները:

Լեզվական արտացոլման դրսևորումներից է փոխակերպումը[1]: Փոխակերպումն օբյեկտիվ իրականության արտացոլման վերացարկված մեխանիզմ է, որի տարբեր աստիճաններում ի հայտ են գալիս որոշակի փոխակերպներ, որոնք հատկանշվում են վերացարկվածության տարբեր աստիճաններով: Փոխակերպումը լեզվական միևնույն բովանդակության արտահայտությունն է լեզվական այլ կառույցներով, այլ կերպ ասած՝ փոխակերպել մի նախադասություն՝ նշանակում է այն փոխել մի քերականական ձևից մյուսի՝ առանց փոխելու նրա իմաստը (J.C. Nesfield)[2]:

Փոխակերպման գործընթացի ուսումնասիրությունը բացահայտում է սերման որոշակի կաղապարներ, որոնք վերացարկված մտածողության տարբեր աստիճանների դրսևորումներ են: Լեզվի փիլիսոփայության տեսանկյունից՝ սերման կաղապարներ են համարվում միջուկային նախադասություններն ու բառակապակցությունները, որոնցից սերում են բաղադրյալ բառերի կաղապարները՝ որպես արդյունք նախադասություն – բառակապակցություն փոխակերպական գործընթացի:

Սույն հոդվածում կդիտարկենք բառակապակցությունների և բաղադրությունների սերման կաղապարները՝ որպես լեզվական արտացոլման վերացարկված մեխանիզմի դրսևորումներ:

I. Նախադասությունների փոխակերպում բառակապակցության

Բառակապակցությունները սերում են երկրորդական նախադասություններից, որոնք իրենց հերթին միջուկային նախադասությունների փոխակերպման արդյունք են: Նախադասություն – բառակապակցություն փոխակերպումն ուղեկցվում է կառույցի ստորոգումային հատկանիշի չեզոքացմամբ և անվանական կապակցության ձևավորումով: Բառակապակցությունը լեզվամտածողության առավել վերացարկված մտածողության հետևանք է՝ համեմատած նախադասությունների, որոնք, կարելի է ասել, լեզվամտածողության նախնական աստիճանի (հաղորդակցական) միավորներ են: Փոխակերպման գծային պլանում բառակապակցությունները բնութագրվում են

---

[1] Փոխակերպման մասին տե՛ս **Պետրոսյան** և ուրիշ. 1975: **Պետրոսյան** 1987: ЛЭС 1990. **Ахманова** 1969. **Стариченок** 2008. **Խաչատրյան** 2021:

[2] **Ջահուկյան** 1973, 502:

երկակի դերով. նախ՝ որպես միջուկային նախադասությունների փոխակերպման հետևանք, երկրորդ՝ որպես սերող կաղապարներ՝ բաղադրյալ բառերի ձևավորման համատեքստում:

Փոխակերպումից առաջացած բառակապակցությունները բաժանվում են ազատ և կայուն տեսակների:

ա) Ազատ կապակցությունները երկրորդական նախադասություններից սերած փոխակերպներ են՝ ոչ ստորոգումային բառակապակցություններ, որոնք հոմանշային հարաբերություն են ցուցաբերում բարդ նախադասության ստորադաս բաղադրիչների (նախադասությունների) նկատմամբ: Հմմտ. Ագուլեցի վաճառականը հպարտությամբ ցույց էր տալիս այն ամենը, *ինչ ինքն ուներ* (ՀՂ): Ագուլեցի վաճառականը հպարտությամբ ցույց էր տալիս *իր ունեցածը:*

Փոխակերպման ընթացքում ստորադաս նախադասությունը բայական լրացումներով հանդերձ վերածվում է հոմանիշ անվանական բառակապակցության. առաջանում է անվանական անդեմ նախադասություն՝ անվանական անդամների խմբով: Հմմտ.

Մխիթարը վերադարձավ Հալիձոր (ՍԽ) – *Մխիթարի վերադարձը Հալիձոր:* Ինքնաթիռը թռչում է Մոսկվայի երկնակամարով – *Ինքնաթիռի թռիչքը Մոսկվայի երկնակամարով* (ԳԹ):

բ) Կայուն կապակցություններն ի հայտ են գալիս նախադասություն **>** ազատ կապակցություն **>** կայուն կապակցություն փոխակերպման (փոխկաղապարման) երկրորդ աստիճանում՝ կապակցության բաղադրիչների շարադասական դիրքի համապատասխան տեղաշարժերի կամ որոշ բաղադրիչների զեղչման հետևանքով:

- Նախադասության բայ-ստորոգյալն իր մակբայ-լրացումով փոխակերպվում է դերբայական դարձվածի, իսկ կաղապարի շարադասական դիրքի համապատասխան տեղաշարժով (փոխկաղապարմամբ) մակբայ-լրացումը դառնում է գոյական որոշյալի ածական-որոշիչ[3]: Հմմտ. խոսքը նոր է ասել **>** նոր ասված խոսք **>** *նոր խոսք ասել,* աշխարհը նոր է հայտնաբերվել **>** նոր հայտնաբերված աշխարհ **>** *նոր աշխարհ հայտնաբերել,* էջը նոր է բացել **>** նոր բացած էջ **>** *նոր էջ բացել,* կյանքը նոր է տվել **>** նոր տված

[3] **Խաչատրյան** 1996, 124–125:

կյանք >*նոր կյանք տալ*, կապիտալն էժան է ձեռք բերել > էժան ձեռք բեր(վ) ած կապիտալ > *էժան կապիտալ ձեռք բերել* և այլն:

- Ազատ կապակցությունների դերբայ-որոշիչը կարող է զեղչվել, և մակբայ-լրացումը կայուն կապակցություններում փոխկաղապարմամբ կարող է հանդես գալ իբրև ածական-որոշիչ: Հմմտ. աստղը վատ է լույս տալիս > վատ լույս տվող աստղ > *վատ աստղ (-ի տակ ծնվել)*, աչքը լավ է տեսնում > լավ տեսնող աչք > *լավ աչք (ունենալ), լավ աչքով (նայել)*, աչքը վատ է տեսնում > վատ տեսնող աչք > *վատ աչք (ունենալ), վատ աչքով (նայել)*, ականջը ծանր է լսում > ծանր լսող ականջ > *ծանր ականջ:*

Այդ կաղապարով են առաջացել նաև *ծանր ձեռք, ձեռքը ծանր, ծանր գլուխ, գլուխը ծանր, ծանր խոսք* կայուն կապակցությունները:

Գոյականական բառակապակցության գոյականական անդամի զեղչման հետևանքով որոշչային դիրքի ածականը փոխկաղապարմամբ ձեռք է բերում պարագայական գործառույթ բայական անդամի լրացման դերում՝ հատկանշվելով մակբայի արժեքով[4]: Այսպես՝ *հանգիստ* սրտով մնալ > *հանգիստ* մնալ, *հանգիստ* խղճով կենալ > *հանգիստ* կենալ, ծովը տանել՝ *ծարավ վիճակում* հետ բերել > ծովը տանել՝ *ծարավ* հետ բերել, դառը դատել՝ *դատարկ գրպանով* նստել > դառը դատել՝ *դատարկ* նստել և այլն:

II. Բառակապակցությունների փոխակերպում բաղադրյալ բառերի

Բարդ և ածանցավոր բառերը բառակապակցությունների և դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք են[5]: Բաղադրյալ բառերը լեզվամտածողության մակարդակով մեկ քայլ բարձր են բառակապակցություններից. ըստ այդմ՝ բաղադրյալ բառերը վերացարկված լեզվամտածողության առավել բարձր աստիճանի դրսևորումներ են, քան նրանց սերիչ կաղապարները՝ բառակապակցությունները: Ընդ որում՝ ձևավորման ժամանակագրությամբ բարդությունները նախորդում են ածանցավոր բառերին. ածանցական կազմություններն առավել բարձր վերացարկվածության հետևանք են և հաջորդում են բարդություններին՝ եզրափակելով փոխակերպման գործընթացը:

1. *Բարդությունները* կարելի է քննել ըստ վերջնաբաղադրիչի արտահայտության պլանի: Ըստ այդ սկզբունքի՝ բարդությունները լինում են երեք տե-

---

[4] **Соколова** 1973, 77:

[5] **Ջահուկյան** 1973, 565:

սակի՝ *բայահիմքով, անվանական բաղադրիչով և բայաբաղադրիչով ձևավորված կազմություններ:*

Ա. Բայահիմքով կազմություններ. Այս կարգի բարդությունները պահպանում են սերող կաղապարների բաղադրիչների շարահյուսական (ստորադասական) հարաբերությունները. ամբողջ բարդությունը հատկանշվում է ենթակայական կամ հարակատար դերբայի նշանակություններով:

ա) Բարդություններ, որոնց վերջին բաղադրիչն արտահայտում է *ենթակայական դերբայի իմաստ:* Այդպիսի բարդությունների մեջ կարելի է առանձնացնել այն կազմությունները, որոնց վերջին բաղադրիչները գրաբարյան կանոնավոր բայերի երկրորդ հիմքի ձևեր են: Այդպիսի բարդության կաղապարներն ունեն երկանդամ կառուցատիպ, ձևավորվել են տարբեր կաղապարներով. կաղապարի տարրերը հատկանշվում են բաղադրիչների տարաբնույթ հարաբերություններով:

Այսպես, հետևյալ բարդությունները առաջացել են *գոյական* + *բայահիմք* **>** *գոյական* կաղապարով, որոնց բաղադրիչներն արտահայտում են «ստորոգյալ-խնդիր» հարաբերություն.

մատույց **>** (**<** մատուցանել) - կառամատույց, նավամատույց, *ասաց* **>** (**<** ասել) - տաղասաց, ողբասաց, երգասաց, բանասաց, *խաղաց* **>** (**<** խաղալ) - լարախաղաց:

Որոշ բարդություններ առաջացել են *գոյական* + *բայահիմք* **>** *ածական* կաղապարով, ինչպես՝

ցույց **>** (**<**ցուցանել) - ուղեցույց, կողմնացույց, հեռուստացույց, *աղաց* **>** (< աղալ) - սրճաղաց, ոսկրաղաց, *կեզ* **>** (< կիզուլ) - հրկեզ, *(զ)անգ* **>** (<անցանել) - երդմնազանց, օրինազանց և այլն:

Ենթակայական դերբայի իմաստով բարդությունների մեջ հանդիպում են գրաբարի անկանոն բայերի երկրորդ հիմքով կազմություններ, որոնք ձևավորվել են *գոյական* + *բայահիմք* **>** *գոյական կամ ածական* կաղապարով, ինչպես՝ *արար* **>** (<առնել) - շինարար, կազմարար, գյուտարար, *տու* **>** (<տալ) - լուսատու, բերքատու, մրգատու, խորհրդատու, *տար* **>** (<տանել) - բեռնատար, նավթատար, գազատար, ուղևորատար, մարդատար, *կեր* **>** (<ուտել) - բուսակեր, խոտակեր, հացակեր, մսակեր, սրտակեր և այլն:

Եթե փորձենք հետընթաց քայլերով վերականգնել վերոբերյալ բարդությունների սերող կաղապարները, կստանանք փոխակերպման գործընթացի հետևյալ դրսևորումները.

Այս մարդը *խնդիր է հարուցում* (միջուկային նախադասություն): Այս մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: Այս մարդը, *որ խնդիր է հարուցում,* չի ընդունվում ունկնդիրների կողմից: *Խնդիր հարուցող* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից: *Խնդրահարույց* մարդը չի ընդունվում ունկնդիրների կողմից:

Փոխակերպված որոշ բարդությունների երկրորդ բաղադրիչները համընկնում են *բայի առաջին հիմքին:* Որոշ բարդություններ ձևավորվել են *մակբայ + բայահիմք* **>** *ածական* կաղապարով, որոնց բաղադրիչներն արտահայտում են «ստորոգյալ-պարագա» հարաբերություն, ինչպես՝ *խոս* **>** (**<**խոսել) - ճշմարտախոս, ստախոս, շատախոս, արագախոս, մեծախոս, քչախոս, *շարժ* **>** (**<**շարժել) - դանդաղաշարժ, արագաշարժ, դյուրաշարժ, *ծագ* **>** (**<** ծագել) - նորածագ:

Այս կառուցատիպի բարդությունների մի զգալի մասը ձևավորվել է *գոյական + բայահիմք* **>** *գոյական // ածական* կաղապարով, որոնք բնորոշվում են բաղադրիչների «ստորոգյալ-խնդիր» շարահյուսական հարաբերությամբ, ինչպես՝ *թուխ* **>** (**<**թխել) - հացթուխ, *հարդար* **>** (**<**հարդարել) - վարսահարդար, մատնահարդար, *դրուժ* **>** (**<**դրժել) - ուխտադրուժ, *վաճառ* **>** (**<**վաճառել) - հացավաճառ, տոմսավաճառ, *գուշակ* **>** (**<**գուշակել) - բախտագուշակ, աստղագուշակ և այլն:

Գոյական + բայահիմք **>** *գոյական* կաղապարով է ձևավորվել՝ *ցան* **>** (**<**ցանել) - սերմնացան, շարքացան, հրացան:

Այս բարդությունների ելակետային կաղապարների բացահայտումը կատարվում է մեթոդական նույն սկզբունքով, ինչ վերոբերյալ բարդությունների դեպքում: Հմմտ. *Այս մարդը բախտ է գուշակում* (միջուկային նախադասություն): Այս մարդը մեծ համբավ ունի: Այս մարդը, *որ բախտ է գուշակում,* մեծ համբավ ունի: *Բախտ գուշակող* այս մարդը մեծ համբավ ունի: *Բախտագուշակ* այս մարդը մեծ համբավ ունի:

բ) Բարդություններ, որոնց վերջին բաղադրիչն արտահայտում է *հարակատար դերբայի իմաստ:* Այս բարդությունները նույնպես դասակարգվում են ըստ այն հանգամանքի, թե դրանց երկրորդ բաղադրիչը բայի ո՛ր հիմքին է համընկնում:

Այսպես, հետևյալ բարդությունների վերջնաբաղադրիչները համընկնում են գրաբարի *բայերի երկրորդ հիմքին*. բարդությունները ձևավորվել են *մակբայ + բայահիմք* **>** *ածական* կաղապարով, որոնք բնորոշվում են բաղադրիչների «ստորոգյալ –պարագա» հարաբերությամբ.

-եկ **>** (**<**գալ) - նորեկ, դրսեկ, *-մուտ* **>** (**<**մտանել) - նորամուտ *-կառույց* **>** (**<**կառուցանել) - նորակառույց, կիսակառույց:

Ստորև բերվող բարդության վերջնաբաղադրիչները համընկնում են *բայի առաջին հիմքին.*

-խառն **>** (**<**խառնել) - արտասվախառն, *-պատ* **>** (**<**պատել) - պարսպապատ, ձյունապատ, մշուշապատ, *-թուխ* **>** (**<**թխել) - նորաթուխ և այլն:

Եթե վերականգնենք այս բարդությունների սերող կաղապարներն ըստ անցման (ձևավորման) աստիճանների, ապա պարզ կդառնա, որ դրանց վերջնաբաղադրիչն արտահայտում է հարակատարի իմաստ: Հմմտ.

Դիմացի լեռը պատվել է մշուշով (միջուկային նախադասություն): **>** Դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

Դիմացի լեռը, *որ պատվել է մշուշով*, հորիզոնի վերջին կետն է: *Մշուշով պատված* դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է: *Մշուշապատ* դիմացի լեռը հորիզոնի վերջին կետն է:

Բ. Անվանական բաղադրիչով բարդությունների վերջնաբաղադրիչի դերում հանդես են գալիս հիմնականում սոմատիզմները, հազվադեպ՝ նրանց հատկանիշները: Այս բարդությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ելնելով արմատական բաղադրիչի գործառական արժեքից (կախյալ և անկախ): Այդ բարդությունները ձևավորվել են *ածական* + *գոյական* **>** *ածական* կաղապարով և բնորոշվում են բաղադրիչների «որոշիչ-որոշյալ» հարաբերությամբ:

ա) Անկախ վերջնաբաղադրիչ ունեն հետևյալ բարդությունները.

ժպիտ **>** լուսաժպիտ, քաղցրաժպիտ, *ակ(ն)* **>** խաժակն, բյուրակն, *հեր* **>** գանգրահեր, թխահեր, շիկահեր, սևահեր, սպիտակահեր, *մազ* **>** թավամազ, գանգրամազ, սևամազ, սպիտակամազ, *ճակատ* **>** պնդաճակատ, կարծրաճակատ, *սիրտ* **>** սևսիրտ և այլն:

Ցույց տանք միջուկային նախադասություններից բարդությունների փոխակերպման աստիճանները՝ համապատասխան օրինակներով:

Լիլիթը լուսավոր ժպիտ ունի (միջուկային նախադասություն): Լիլիթը գեղեցիկ աղջիկ է: Լիլիթը, *որ լուսավոր ժպիտ ունի*, գեղեցիկ աղջիկ է: *Լուսավոր ժպիտ ունեցող* Լիլիթը գեղեցիկ աղջիկ է: *Լուսաժպիտ* Լիլիթը գեղեցիկ աղջիկ է:

բ) Կախյալ բաղադրիչ ունեն այն բարդությունները, որոնց վերջնաբաղադրիչը անեզական գոյական է: Դրանք ձևավորվել են *ածական* + *գոյական* **>** *ածական* կաղապարով, որոնք ունեն «մի բան ունեցող» հատկանշային նշանակություն, որոնց բաղադրիչները արտահայտում են «որոշիչ-որոշ-

յալ» հարաբերություն: Բարդությունների վերջնաբաղադրիչները փոխակերպված տարբերակներում դրսևորում են դերբայական իմաստներ: Հմմտ.

(Նա) սուր միտք ունի **>** սուր միտք ունեցող **>** սրամիտ:

Այդ բարդություններից են՝ *դեմ(ք)* **>** գեղեցկադեմ, խոժոռադեմ, *հոն(ք)* **>** մրահոն, սևահոն, կարմրահոն, *ձեռ(ն)* **>** առատաձեռն, ունայնաձեռն, դատարկաձեռն, ճերմակաձեռն, *հայաց(ք)* **>** խստահայաց, ուղղահայաց, *միտ(ք)* **>** թանձրամիտ, ուղղամիտ, սրամիտ, *կամ(ք)* **>** բարեկամ, չարակամ և այլն: Հմմտ.

Դորիանը գեղեցիկ դեմք ունի (միջուկային նախադասություն): Դորիանը, *որ գեղեցիկ դեմք ունի,* կարծես չի ծերանում: *Գեղեցիկ դեմք ունեցող* Դորիանը կարծես չի ծերանում: *Գեղեցկադեմ* Դորիանը կարծես չի ծերանում:

Լեզվում վերացարկվածությունը հասցնում է այն բանին, որ ստեղծված բարդության կաղապարներն ինքնուրույն արժեք են ստանում, և նրանցով համաբանորեն կազմվում են նոր բառեր՝ անկախ բարդության կաղապարի համար հիմք ծառայած բառակապակցությունների և նախադասությունների կաղապարներից:

Գ. *Բայաբաղադրիչներով բարդությունների* սերման կաղապարների վերաբերյալ Գ. Ջահուկյանը նշում է, որ հաճախ դժվար է սահման դնել այս տիպի բարդ հիմքերի և բայական հիմքերով կազմված գոյականներից ու ածականներից երկրորդաբար կազմված բայերի միջև. այսպես, ահաբեկ-ը կարող է մեկնաբանվել կա՛մ որպես *ահաբեկ* ածականի բայացված ձև, կա՛մ դիտվել որպես *ահով բեկ-ել* բառակապակցությունից ստացված բարդություն. այսպիսի դեպքերում հարկավոր է ստուգել, թե արդյոք բարդ հիմքը անկախ չի՞ գործածվում որպես ածական կամ գոյական[6]:

Այս կարգի բարդությունները առաջացել են *գոյական + բայ* **>** *բայ* կաղապարներով, ինչպես՝ ալիքներով կոծել **>** ալեկոծել, անդամները հատել **>** անդամահատել, արդյունքը հանել **>** արդյունահանել, արծաթով պատել **>** արծաթապատել, ոսկով (լուծույթով) ջրել **>** ոսկեջրել, ոսկով (զ)օծել **>** ոսկեզօծել, ահով զանգել **>** ահազանգել, ասեղ(ներ)ով գործել **>** ասեղնագործել, նկար(ներ)ով զարդարել **>** նկարազարդել, ական(ներ)ով պատել **>** ականապատել և այլն:

Վերականգնենք այս կարգի բարդության սերիչ կաղապարներից՝ փոխակերպման օրինակներով: Հմմտ.

---

[6] **Ջահուկյան** 1989, 223:

Վարպետը մտածում է: *Վարպետը նկարներով է զարդարում որմնապատը* (միջուկային նախադասություն): Վարպետը մտածում է *նկարներով զարդարել* որմնապատը: Վարպետը մտածում է *նկարազարդել* որմնապատը:

Որոշակի դիրքում բայական բարդությունների սերիչ կաղապարների (բառակապակցությունների) անվանական բաղադրիչներ են դառնում ածական// մակբայ տարարժեք բառերը. նման բարդությունները ձևավորվում են *ածական// մակբայ + բայ* **>** *բայ* կաղապարներով, ինչպես՝ շատ խոսել **>** շատախոսել, բռնի գրավել **>** բռնագրավել, երկար ձգել **>** երկարաձգել, համառոտ գրել **>** համառոտագրել, ամուր պնդել **>** ամրապնդել:

Այս կարգի բարդությունների սերիչ կաղապարները՝ միջուկային նախադասություններ ու բառակապակցություններ, հատկանշվում են հիմնաբաղադրիչների ընթացայնության գաղափարով, որ պահպանվում են փոխակերպների իմաստային կառուցվածքում: Հմմտ. (Նա) մտածում է: *(Նա) համառոտ է գրում* (միջուկային նախադասություն): Նա մտածում է *համառոտ գրել*: Նա մտածում է *համառոտագրել*:

2. Ածանցավոր կազմությունները հետևանք են լեզվական միավորների աստիճանական վերացարկման գործընթացի. փոխակերպման վերջնական փուլում տեղի է ունենում բայական բովանդակության վերացարկում, և առարկայական նշանակությամբ միավորները (բարդության բաղադրիչները) վերածում են բառակազմական երկրորդական ձևույթների՝ իրենց բառակազմական նշանակությամբ արտահայտելով բարդության վերջին բաղադրիչների (նյութական) նշանակությունը:

Ածանցավոր կազմությունները բաժանվում են երկու խմբի. մի դեպքում փոխակերպները վերջածանցավոր կազմություններ են, երկրորդ դեպքում՝ նախածանցավոր:

Ա. Վերջածանցավոր կազմություններ. այս կարգի բառերի ածանցները փոխարինում են *ունենալ* բայի ենթակայական կամ հարակատար դերբայներին՝ «մի բան ունեցող / ունեցած կամ չունեցող / չունեցած» նշանակություններով:

Վերջածանցավոր փոխակերպների սերող հիմքերը հիմնականում գոյական անուններ են (բաղադրյալ հիմքերը՝ թվական լրացումներով, որոնք սերիչ կաղապարներում ունեցել են խնդրային գործառույթներ): Հմմտ. *-անի* **>** յոթգլխանի, երկհարկանի, քառոտանի, միոտանի, *-ավետ* **>** բուրավետ, ծաղկավետ, հոտավետ, բուրումնավետ, գինեվետ, *-անոց* **>** երեքանոց, հինգկոպեկանոց, *-ատ* **>** պոչատ, գունատ, կիսատ, կռնատ, *-(ա)պան* **>** այ-

գեպան, դռնապան, կառապան, բարապան, պարտիզպան, *-(ա)լի* > արյունալի, ցավալի, *-եղ* > ուժեղ, համեղ, զորեղ, շնչեղ, ձայնեղ, մարմնեղ, *-յա / ե* > ոսկյա / ոսկե, արծաթյա / արծաթե, երկաթյա /երկաթե, - *ոտ* > բրդոտ, ճարպոտ, յուղոտ, մրոտ և այլն:

Ինչպես նկատելի է այս բաղադրությունների ձևավորման դիտվածքից, դրանք առաջացել են *գոյական +ածական* > *ածական* փոխակերպական կաղապարով:

Վերականգնենք դրանց փոխակերպական քայլերի կաղապարները: Նկատենք, որ ածանցական կաղապարներում ածանցը փոխարինում է հատկանշային բովանդակություն ունեցող դերբայներին: Հմմտ.

Բնակարանը երկու հարկ ունի (միջուկային նախադասություն): Այն գտնվում է գլխավոր փողոցի վրա: Բնակարանը*, որ երկու հարկ ունի,* գտնվում է գլխավոր փողոցի վրա: *Երկու հարկ ունեցող* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա: *Երկհարկանի* բնակարանը գտնվում է գլխավոր փողոցի վրա:

Որոշակի դեպքերում փոխկաղապարված կապակցություններում մակբայական բաղադրիչները կարող են փոխարինվել մակբայանիշ նախածանցներով, այդ դեպքում բարդությունները հարադրությունների կամ ազատ կապակցությունների նկատմամբ ցուցաբերում են իմաստային նրբերանգներ: Բաղադրության կաղապարն է՝ *ածանց + բայ* > *բայ*.

ա) դուրս > *արտ.* դուրս բերել > արտաբերել, դուրս հանել > արտահանել, դուրս մղել > արտամղել, դուրս շնչել > արտաշնչել,

բ) ներս > *ներ.* ներս դնել > ներդրել, ներս մտցնել > ներմուծել, ներս բեռնել > ներբեռնել,

գ) կրկին//նորից > *վեր(ա).* նորից կազմել > վերակազմել, նորից զինել > վերազինել, նորից շինել > վերաշինել, կրկին՝ նորից դառնալ > վերադառնալ, նորից գրել > վերագրել,

դ) բարձր > *գեր.* բարձր դասել > գերադասել, բարձր գնահատել > գերագնահատել,

ե) ցածր > *ստոր.* ցածր դասել > ստորադասել,

զ) հակառակ > *հակ.* հակառակ ասել > հակասել,

է) հավասար > *համ.* հավասար դասել > համադասել:

Վերականգնենք այս բարդությունների սերիչ կաղապարներից՝ փոխակերպման օրինակներով: Հմմտ. Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում: Ֆրանսիական կառավորությունը *դուրս է հանում* ներգաղթյալ-

ներին (միջուկային նախադասություն): Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում՝ *դուրս հանել* ներգաղթյալներին: Ֆրանսիական կառավարությունը որոշում է կայացնում *արտահանել* ներգաղթյալներին:

Բ. Նախածանցավոր կազմություններ. այս կարգի փոխակերպներն արտահայտում են «մի բան չունեցող, մի բանից զուրկ» իմաստներ՝ պայմանավորված նախածանցի բառակազմական նշանակությամբ: Տվյալ դեպքում, մինչև ածանցավոր կազմության ձևավորումը, հատկանիշի բացակայությունը արտահայտվել է նյութական նշանակություն ունեցող բառերով: Ածանցի (ածանցավոր կազմության) ի հայտ գալը պայմանավորված է վերացարկվածության առավել բարձր աստիճանով:

Այդ բառերը հիմնականում ժխտական նախածանցով կազմություններ են, ինչպես՝ *ան-* **>** անտուն, անգո, անիմաստ, անկախ, անսահման, անհրապույր, *դժ-* **>** դժկամ, դժգույն, դժգոհ, *ապ-* **>**ապաբախտ, ապօրինի, ապուշ, ապերջանիկ, ապերախտ, *տ-* **>** տհաս, տմարդի, տկար, *չ-* **>** չկամ, չտես, չհաս, չբեր և այլն:

Նախածանցավոր կազմություններն առաջացել են *ածանց + գոյական* **>** *ածական, ածանց + բայահիմք* **>** *ածական, ածանց+ ածական* **>** *ածական* կաղապարներով:

Վերականգնենք այս բառերի փոխակերպական քայլերի կաղապարները.

Այս մարդը տուն չունի (միջուկային նախադասություն): Նա մոլորված է: Այս մարդը, *որ տուն չունի,* մոլորված է: *Տուն չունեցող* մարդը մոլորված է: *Անտուն* մարդը մոլորված է:

Բաղադրությունների մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերջանում են ***ածանցակերպներով:***

Այդ կազմությունները ձևավորվել են *բայահիմք + ածանցակերպ* **>** *գոյական* կամ *ածական* կաղապարներով և սովորաբար արտահայտում են ենթակայական դերբայի նշանակություն: Այդ բառերից են՝ *-գետ* **>** (< գիտենալ – իմացող) - լեզվագետ, գրականագետ, իրավագետ, բնագետ, *-գործ* **>** (< գործել –որևէ գործով զբաղվող) - հողագործ, գորգագործ, թիթեղագործ, մանածագործ, *-վար* **>** (< վարել – վարող) - նավավար, գործավար, հեռախոսավար, մեքենավար, խմբավար, *-բան* **>** (< որևէ ուսմունք իմացող) – իրավաբան, լեզվաբան, հոգեբան, փաստաբան, *-բեր* **>** (< բերել - բերող) - անձրևաբեր, ամպրոպաբեր, լրաբեր, գրաբեր, նամակաբեր:

Դիտարկենք այս բառերի սերման կաղապարները՝ փոխակերպման օրինակներով.

Արամը մեքենա է վարում (միջուկային նախադասություն)։ Նա ճանաչ- ված մասնագետ է։ Արամը, *որ մեքենա է վարում,* ճանաչված մասնագետ է։ *Մեքենա վարող* Արամը ճանաչված մասնագետ է։ *Մեքենավար* Արամը ճա- նաչված մասնագետ է։

Եզրակացություններ

Փոխակերպումը լեզվափիլիսոփայական գործընթաց է, որ կապվում է նախ՝ օբյեկտիվ իրականության, ապա նաև լեզվական վերացարկման գոր- ծընթացի հետ՝ որպես արտացոլման բարձր մակարդակի դրսևորում։ Փո- խակերպական գործընթացն ուղեկցվում է *նախադասություն* **>** *բառակապակ- ցություն* **>** *բաղադրյալ բառեր* անցման օղակներով, որոնք հատկանշվում են վերացարկվածության տարբեր աստիճանով։

Փոխակերպման գործընթացում փոխակերպների իմաստային բեռնվա- ծությունը կրում է բայական բաղադրիչը, որ նախադասությունների պարզ ստորոգյալից փոխակերպվում է բառակապակցության դերբայի, իսկ բար- դության մեջ՝ բայահիմքի՝ հանդես գալով որպես դոմինանտ վերջնաբաղադ- րիչ։

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Լ.Մ. 1996, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, ՀՀ ԳԱ «Գիտություն», Երևան, 257 էջ։

Խաչատրյան Լ.Մ. 2021, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, ՀՀ ԳԱ «Գիտություն», Երևան, 446 էջ։

Պետրոսյան Հ.Զ. 1987, Հայերենագիտական բառարան, «Հայաստան», Երևան, 686 էջ։

Պետրոսյան Հ.Զ., Գալստյան Ս.Ա., Ղարագյուլյան Թ.Ա. 1975, Լեզվաբանական բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 316 էջ։

Ջահուկյան Գ.Բ. 1973, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 502 էջ։

Ջահուկյան Գ.Բ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 319 էջ։

Ахманова О.С. 1969, Словарь лингвистических терминов, «Советская Энциклопедия», Москва, 605 с.

Соколова Г.Г. 1973, Транспозиция прилагательных и существительных, изд.-во «Высшая школа», Москва, 235 с.

Стариченок В.Д. 2008, Большой лингвистический словарь, изд.-во «Феникс», Ростов-на-Дону, 811 с.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԹ – «Գրական թերթ»

ՀՂ – Հովհ. Ղուկասյան

ՍԽ – Սերո Խանզադյան

ЛЭС – Лингвистический энциклопедический словарь, 1990, «Советская Энциклопедия», Москва, 683 с.

ТРАНСФОРМАЦИЯ КАК АБСТРАГИРОВАННЫЙ МЕХАНИЗМ ЯЗЫКОВОЙ РЕФЛЕКСИИ

ХАЧАТРЯН Л.

Резюме

Ключевые слова: трансформация, абстракция, словосочетание, сложные слова, префиксальная модель, суффиксальная модель, аффиксоид.

Трансформация – это выражение одного и того же языкового содержания с помощью альтернативных структур, рассматриваемая как абстрагированный механизм языковой рефлексии. Процесс трансформации осуществляется поэтапно: предложение – фраза –составное слово, которые характеризуются разной степенью абстракции.

Моделями трансформации предложения в словосочетание являются подчинительные словосочетания, которые превращаются из коммуникативных в номинативные единицы (свободные и устойчивые сочетания). Устойчивые сочетания образуются путем соответствующего смещения синтаксической позиции свободной модели или посредством эллипсиса компонентов.

Модели составных и производных слов, в свою очередь, характеризуются разной степенью абстракции. Суффикс имеет более высокую степень абстракции, чем компонент сложного слова. Модели сложных слов характеризуются наличием конечных компонентов различных конструкций: глагольные основы, именные компоненты и глагольные компоненты. Деривационные модели бывают двух видов: префиксальные и суффиксальные.

В процессе трансформации глагольный компонент несет на себе семантическую нагрузку преобразований. Из простого предиката предложения он превращается в причастие в рамках словосочетания, а в сложных словах – в глагольную основу, выступающую в качестве доминирующего компонента.

TRANSFORMATION AS AN ABSTRACTED MECHANISM OF LINGUISTIC EXPRESSION

KHACHATRYAN L.

Summary

Key words: transformation, abstraction, word-complexity, word-combination, prefixal pattern, suffixal pattern, affixoid.

Transformation is the expression of the same linguistic content using alternative structures, it is seen as an abstracted mechanism of linguistic expression. The transformation is accomplished through sentence-phrase-composition stages which are characterized by different degrees of abstraction.
The generating patterns of transformation of a sentence into a word-combination are subordinate word-combinations which transform from communicative into nominal units (free and fixed combinations). Fixed combinations are formed by the corresponding displacement of the syntactic position of a free pattern or by means of the elipsis of the components.

Patterns of compound and derivative words are in their turn characterized by various degrees of abstraction. A suffix has a higher degree of abstraction than a component of a compound word. The patterns of compound words are characterized by the existence of final components and they come in a variety of constructions: verb-stems, nominal components, and verb-components. Derivational patterns are characterized from two perspectives: prefixal and suffixal.

In the process of transformation – the verbal component bears the semantic load of transformations. It is transformed from a simple predicate of the sentence into a derived word-combination, whereas in the compound words – into a verb-stem acting as the dominant component.

АЛЬБЕРТ МУШЕГЯН*

Доктор филологических наук, урартолог

Института литературы им. М. Абегяна НАН РА

albert.musheghyan@yandex.com

DOI: 10.54503/1829-4073-2022.2.189-197

АРТЕФАКТЫ ИЗ РАСКОПОК КАРМИР БЛУРА И НОВАЯ ИНТЕРПРЕТАЦИЯ УРАРТСКОГО ТЕРМИНА ŠIŠUHANI

Ключевые слова: урартоведение, артефакты, археологи, Кармир блур, Эрмитаж, šišuhani, Аргишти I.

Газета «Голос Армении» (от 9 декабря 2021 г.) напечатала весьма интересную статью о раскопках армянских и австрийских археологов на территории Кармир блура, в крепости урартского бога войны Тейшеба. Как известно, первым и многолетним руководителем раскопок на территории Кармир блура был востоковед, археолог, доктор исторических наук, профессор Борис Борисович Пиотровский (1930–1964 гг.). В дальнейшем академик АН СССР Пиотровский был выдвинут на пост директора Государственного Эрмитажа в Санкт-Петербурге (1964–1990 гг.). В годы учебы на европейском отделении филологического факультета Ереванского госуниверситета, по инициативе кафедры истории, мне посчастливилось учавствовать в экскурсии на Кармир блур в 1951 году, где я имел возможность выслушать разъяснения Б. Пиотровского о международно признанном древнем Урартском государстве.

В своем интервью корреспонденту Sputnik Армения Лауре Саркисян директор музея-заповедника «Эребуни» Микаэл Бадалян отмечает, что «открытое в ходе раскопок на территории холма «Кармир блур» большое строение имеет огромное значение как для Армении, так и всего археологического мира. Второго такого строения в нашей стране до сих пор не было найдено. Находка позволит прояснить многие аспекты урартоведе-

* *Հոդվածը ներկայացվել է 01.08.22, գրախոսվել է 22.08.22, ընդունվել է տպագրության 22.08.22:*

ния в Армении, а также включить нашу страну в недлинный список стран, на территории которых были обнаружены подобные сооружения. Нами был раскопан огромный комплекс длиной 24 метра, шириной 14 метров с мощными стенами высотой 1,5 метра, с мощеным полом. Там же были обнаружены лошадиные кости. Это может свидетельствовать о том, что территория служила королевской конюшней ... Аналогичные, но с более скудными артефактами сооружения были раскопаны на территории Ирана и Израиля».

По прочтении статьи в газете «Голос Армении» о расчистке Кармир блура и выявлении урартской царской конюшни у меня возникло желание сообщить, что за последние годы мною были раскрыты и семантически переистолкованы многие урартские термины, которые до сих пор объяснялись и переводились «как предположительный перевод согласно контексту». Этот метод, широко используемый всеми европейскими и американскими урартоведами, является весьма сомнительным способом раскрытия смысла слов, как доказывает мой личный опыт. Одним из расшифрованных мною многочисленных спорных урартских терминов является знаковый термин «šišuhani», который немецкий урартовед Фридрих Вильгельм Кёниг в своей книге «Handbuch der chaldischen Inschriften»[1] переводит с почти нулевым значением: «wiederum» («вновь»)[2]. Приходится констатировать, что представители международного братства урартских переводчиков, все до одного следуя Кёнигу, переняли это значение. Например, видный армянский урартовед Николай Арутюнян в своем «Корпусе урартских клинообразных надписей»[3] термин šišuhani переводит, следуя опять-таки Ф.В. Кёнигу, как наречие «вновь». Этот термин трижды отмечен в двух надписях Аргишти I – №173 и №174[4] .

Вопреки данному, международно принятому несостоятельному истолкованию, мною, как было отмечено выше, давно была дана новая семантическая интерпретация термина «šišuhani». К моему удивлению, разноя-

[1] **König F.W.** 1955, 1957.

[2] **König F.W.** 1955, 1957. Band II, S. 202.

[3] **Арутюнян** 2001.

[4] **Арутюнян Н.В.** КУКН: №173 столбец I, строка 5, с. 155 и столбец V, строка 43, с. 176; №174 камень А, строка 14, с. 184.

зычные урартоведы не догадались, что термин «šišuhani» – сложное слово, состоящее из двух корней: «šišu» (= конь, лошадь, скакун, жеребец) и «han» (= постоялый двор). В урартских надписях вместо šišu или sisu обычно употребляется армяно-урартское обозначение коня «KUR.RA», что знакомо нам из армянского эпоса как «Куркик-Джалали», так что крестьянская форма «քուռակ» имеет урартскую древность. Второй корень «хан(е)» в вавилонском языке имеет более широкое правовое значение; например, в словосочетании šapituu[t Hanк] означает «судебная контора» или «судейское учреждение». В урартской лексике дважды встречается также слово «sirihani», с весьма спорным переводом И.В. Дьяконова – «хлев или загон».

Между тем, найденное армянскими и австрийскими археологами пристанище коней, где были обнаружены останки лошадей, полностью совпадает с моей интерпретацией урартского термина «šišuhani». По моему разумению найденное сооружение не конюшня, а в более широкой интерпретации – «пристанище (իջևանատուն) королевской кавалерии (այրուձի)» для ночлега и смены уставших коней свежими конями для продолжения похода, иногда непосредственно перед сражением с врагом.

Урартский царь Аргишти I в 782 г. до н.э. основал город Эр(е)буни, современную столицу Армении – Ереван. И поскольку в своей надписи урартский царь заявлял, что он построил этот город странам вражеским в усмирение (т.е. «на ужас»), то из этого следует, что существующая в Кармир блуре крепость бога войны Тейшеба (Тешуб), а также вновь открытое пристанище коней построил тот же воинственно настроенный урартский царь Аргишти, сын Менуа.

Основой для моего нового толкования слова «šišuhani» послужил эпизод бегства армянского царя Ерванда (201 г. до н.э.), о чем повествует Мовсес Хоренаци. Гениальный армянский историк V века удивительным образом сохранил для нас, далеких поколений, не только слово «хан» (իջևանատուն), но и описал сцену бегства армянского царя Ерванда из рода армянских Аршакидов, вынужденного отречься от трона[5], в пользу но-

[5] **Мовсес Хоренаци** 1990, кн. II, гл. 37. Как отмечает Мовсес Хоренаци, «когда умер Санатрук, он (Ерванд) единодушно был возведен на престол, однако без обряда ко-

вого царя Арташеса, полководец которого Смбат Багратуни преследовал Ерванда всю ночь, а Ерванд, благодаря свежим коням из хана, пытался скрыться от преследователя: «Сам же Ерванд, покрыв на своем коне многие стадии пути, выходит к *подставам*, расставленным между лагерем и его городом и, пересаживаясь на свежих коней, мчится от стоянки к стоянке. Храбрый Смбат, преследуя его, нещадно гнал всю ночь до самых городских ворот»[6]. Считаю необходимым привести также текст Мовсеса Хоренаци в армянском подлиннике на грабаре: «Իսկ Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի *խանս* կարգեալս ի բանակէն իւրմէ ի քաղաքն իւր, հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգուցէ փախչել: Եւ քաջին Սմբատայ զհետ մտեալ՝ սաստկագոյնս վարէր զնա ի գիշերի մինչև ցդուռն քաղաքին»[7]. В армянском оригинале на древнеармянском слово «խան-хан» Г. Саркисян переводит на русский как «подстава» (в старину: лошади, приготовленные на пути следования для смены уставших. Подставные лошади)[8].

Приведенный мной эпизод бегства царя Ерванда, с использованием существующих в III веке до н.э. в столице Армении Ервандашате пристанище коней, описанный Мовсесом Хоренаци, полностью подтверждает смысл и назначение исторических сооружений, найденных в Кармир блуре.

Микаэл Бадалян отмечает в своем интервью, что выявленные в Кармир блуре «сооружения схожи со средневековыми караван-сараями, которые сохранились в Армении. Пристанища нужны были, чтобы приезжающие в город или проезжающие через него караваны и именитые гости могли остановиться и отдохнуть».

Таким образом, по оценке директора музея-заповедника «Эребуни» Микаэла Бадаляна, в Кармир блуре действительно раскрыты «не рядовые сооружения, и это ясно не только специалистам из Армении, но и их коллегам из разных стран мира. А на фоне манипуляций и разных

ронования его мужами из рода Багратуни». Это означало, что коронация была незаконной.

[6] **Мовсес Хоренаци** 1990, кн. II, гл. 46.

[7] **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն Հայոց*, 1913, 172:

[8] «Подстава» см.: **Ожегов** 1992, Толковый словарь русского языка, https://royallib.com/read/ogegov_sergey/tolkoviy_slovar_russkogo_yazika.html#8069120

истолкований информации об Урарту, находка – очередное доказательство, что именно Армения – преемница этой великой культуры». Директор музея отметил, что в этом году была раскопана только одна часть, остальные работы запланированы на 2022 год.

В заключение статьи отмечу, что за последние годы более 12.000 армян и представителей разных народов Европы и Америки, в их числе британский историк Кристофер Джей Уолкер (1942–2017), который много писал об Армении[9], выступили с протестом против вопиющей несправедливости, что галерея N54 Британского музея, где демонстрируются экспонаты древнеурартского периода и артефакты, раскопанные в Кармир блуре Еревана, называется «Древнейшая Турция».

Достойно поощрения, что инициатором сбора подписей была Зепюр Батикян, работавшая до этого в Армянском посольстве Великобритании, в Лондоне, а также другие юноши и девушки. Администрация Британского музея сочла справедливым, что эпитет «Древнейшая» никак не соответствует Турции, существовавшей всего несколько столетий перед завоеванием Костантинополя в 1453 г., и переименовала галерею N 54, назвав её «Анатолия и Урарту», с учетом представленных в ней экспонатов древнейшей урартской культуры.

Как и следовало ожидать, после этого в Турции и Азербайджане поднялась антиармянская истерия: «Надо признаться, что это поражение турецкого мира. Армянам, в очередной раз, удалось обмануть весь мир, в частности британских историков, которые тоже поставили подписи под мифотворными фактами армян. Армяне не щадят сил, чтобы доказать свое урартское происхождение...».

Слово «мифотворчество» рифмуется со словом «смехотворство». Не армяне доказывают свое урартское происхождение, а Его Величество Древнейший Армянский Язык, который почти 4000 лет хранит и использует в своем арсенале урартские слова и словосочетания. Извест-

---

[9] **Christopher J. Walker** 1991; Armenia: The Survival of a Nation 1980, 1990; Visions of Ararat (writings on Armenia) 2005; «At History's Crossroad: The Making of the Armenian Nation» (The Armenians: From Kings and Priests to Merchants and Commissars) (Book review) Weekly Standard. Nov 27. 2006.

ный армянский языковед Рачия Ачарян в своем уникальном многотомном «Корневом словаре армянского языка», исследуя и этимологизируя 11000 (точнее 10996) корней армянского языка, объявил из них недействительными 2221, семантически интерпретировал 5095 слов, из коих 4015 – заимствованные и 927 – индоевропейские. Остальные 3680 корней, которые не были прокомментированы великим языковедом, по моему предположению, принадлежат урартскому языку. Несколько корней, которые по «Корневому словарю армянского языка» отнесены к исконно армянским или же праязыковым корням, я считаю урартскими, так же, как армянские слова «սլաք», «նժույգ», «քուռակ», «խան», «նգախարխար»[10] (նիգով ավերել, քարուքանդ անել) – последнее выражение сохранил для нас гениальный Мовсес Хоренаци; встречается также в «Истории Александра», перевод которого с греческого приписывается Хоренаци. Корень «խարխար» дошел до нас в урартских клинописных надписях[11], а армянским словом «նիգ» аккады называли рукоятку инструмента «nigkalagы», чем в древности очищали зерно от отруби и пыли, а также рукоятки копья и других видов оружия.

Из этого следует, что одна треть корней армянского языка принадлежит урартскому языку. Это означает, что в числе семантически интерпретированных Рачия Ачаряном 5095 корней также имеются урартские корни, некоторые из которых исследованы лично мною, и результат исследования показал их истинно урартское происхождение. В качестве примера могу привести имя «Слак» родоначальника рода Слкуни, которое, по моему истолкованию, по – урартски означает «стрела» (по арм. «նետ»).

Слово «iarani» на урартском означает «святилище», отсюда и армянские слова «երանել, երանի, երանելի, երանություն, երանուհի, երնեկ, երանեալ» и т.п.[12].

---

[10] Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Գ, ԻԲ, էջ 290. «Եւ *նգախարխար* արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին» («...և այն պատերը, որ Հայկազյան Տիգրանը շինել էր հաստ և ամուր, *հիմքից քանդելով,* տապալեցին ...» – թարգմ. Ստ.Մալխասյանցի):

[11] Арутюнян Н.В. КУКН, «harharš(u)», «harhar(u)» (разрушать): №№ 45, 173, 174, 241, 242, 244, 275, 392, 411, 449; аккад. «naqāru» (разрушать): № 387.

[12] **Աճառյան** 1973, 38:

Будучи студентом европейского отделения филологического факультета Ереванского госуниверситета, я имел счастье быть учеником великого Рачия Ачаряна в 1952–1953 учебном году. После преследований и необоснованного осуждения со стороны Комитета госбезопасности он был реабилитирован и на последнем году жизни ему разрешили снова преподавать в своем любимом университете, но это длилось всего лишь с сентября по 16-ое апреля 1953 года, ибо вечером этого дня он скончался.

Найденное на холме Кармир блур историческое сооружение эпохи Урарту еще раз подкрепляет незыблемое единство Урарту и Армении, что подтверждено наукой.

БИБЛИОГРАФИЯ

Harout Sassounian's (b. 1950, Aleppo, lives now in Los Angeles) interview depicts his pro-Armenian, patriotic activities. He graduated from two higher educational institutions in the USA. He lived four years in Geneva and did a significant work in the sacred mission of the international recognition of the Armenian Genocide. He even managed to gain the international attention to the fact of the Sumgayit massacres. There is an interesting fact in the interview. At the Department of Human Rights of the UN in Geneva, H. Sassounian made a speech condemning the Armenian massacres in Sumgayit. "On the following day, when

the speeches started, it was my turn. I began to denounce the events in Sumgayit. There happened something of exceptional importance; the whole delegation of the Soviet Union stood up and left the UN premises," concludes Sassounian (p. 417).

H. Sassounian has been the assistant director of "The Lincy Foundation," established by Kirk Kirkorian and allocated huge sums of money to Armenia and Artsakh. Learning about the grave financial situation of the Armenian schools in Lebanon, he has sent an assistance of 4,5 million dollars to 28 Armenian schools there (p. 418).

Exemplary is the behavior of the couple Jack and Eva Medsorians toward Armenia, which they have visited quite frequently. In May 2012, the president of Armenia Serge Sargsian decorated Jack Medsorian with the "Movses Khorenatsi" medal for services rendered to the Motherland. Eva Medsorian, who still has an exquisite voice and sings, relates about her childhood memories in Boston, where Soviet Armenia had its honorable place. "After the war, - continues Eva Medsorian, - I was just 14 years old. I started to sing Armenian songs on stages. I had a beautiful voice, and they loved me. We used to organize Armenian concerts like, for instance, the concerts dedicated to the celebration of the Sovietization of Armenia on November 29 every year. The local Armenians used to gather in a large hall, and we had nice Armenian evenings. We had also a dance group" (p. 393).

Numerous are V. Svazlian's recorded testimonies of the survivors of the Armenian Genocide and the interviews with individuals, who then had preserved their Armenian identity.

On these grave days for our Motherland, after the loss of Shoushi and Hadrout, we hear that the Turkish "Gray wolves" militaries, who had committed violences, were reported in Shoushi. In V. Svazlian's book, there is the tale "The origin of the Turks: 'The Gray wolves'". It is said there that the Turks were of Mongolic origin and come from some parts of China. One day these nomads saw a gray wolf, and they followed it on horseback. The gray wolf came to Armenia, and they followed it to Armenia. They saw that Armenia was a beautiful country and decided to remain there. Later on, they made the "Gray wolf" their symbol. The Turks started to oppress the Armenians, they imposed heavy taxes on them, they killed, set their houses to fire. Subsequently, they started to kidnap Christian boys up to 10 years old, they circumcised and Islamized them, they changed their language and turned them into Janissaries. The Turks forbade the Armenians to

speak Armenian and even cut the tongues of those speaking their mother tongue. Faithful to the cruel and violent traditions of their ancestors, they have established a reactionary youth organization entitled "The Gray Wolves" in Turkey nowadays (p. 439).

Certain folklore plots are, apparently, wandering in the Armenian environment. As for example, "The King and the Pauper," which, as a fairy-tale, is present in the stories recorded in various states. The pauper can tell such a lie that the king is compelled to fill the pauper's bag with gold (p. 446).

In the section of historical tales, there are interesting narratives about Khrimian Hayrik, General Andranik, Soghomon Tehlirian, William Saroyan, Nicol Aghbalian, Garegin Nzhdeh. Catholicos Vazgen I, Monte Melkonian and other celebrated Armenians.

Khrimian Hayrik is likened to Ghevond Yerets, who participated in the heroic battle of Avarayr, to Nerses the Great, to Nerses the Graceful. Khrimian Hayrik with his work "Grandfather and Grandson" is heralding the Armenians the precept of remaining attached to the native land, cultivating the soil and acting with beneficence. The Armenian Hayrik (Father) not only remained on his height, but he preferred the native thorn to the foreigner's rose (p. 470).

In the tale relating about General Andranik it is said: "Concerning the Turks, my father said that our great General Andranik was always an opponent of the Turks and used to say to the Dashnaks: 'You reconciled with the Turks, but I myself cannot do it until my death. A day will come, when those revolutionaries (i.e. the Young Turks) will become beasts like Sultan Hamid and will exterminate you all" (p. 471).

In the tale representing Soghomon Tehlirian it is narrated that Soghomon did not kill Talaat alone, he also killed an Armenian called Haroutyoun Mkrtchian, who, through the Chief Police officer Petri, had handed Talaat the black list of 250 Armenian intellectuals in Constantinople, and only 10 of those survived (p. 472).

In the tale about the English-writing Armenian writer William Saroyan, important facts about the world-renowned writer are reported. Saroyan was awarded the "Oscar" prize for the screenplay written on the basis of his book "The Human Comedy" (in 1942). There is also a mention of Saroyan's well-known self-appraisal: "Although I write in English, and I am an American by birth, I consider myself an Armenian writer. The language I write is English, the

environment is American, but the spirit, which induces me to write is Armenian. Therefore, I am an Armenian writer…" (p. 473).

In the tale dedicated to Garegin Nzhdeh, there is a mention about his last wish to see Mount Ararat with his own eyes before being exiled to Siberia, (p. 474).

There are also a number of ludicrous short stories in the book. One of them is called "George Washington and the Armenian Boys". In 1776, during the struggle incited for the independence of America, two Armenian youths, frozen up at their military sentry post tell one another: "Brother Sargis, we were fools to leave our beautiful Harpoot and to come here in order to freeze to death". At that moment, the commander of the armed forces of the American colonies rebelling against England, George Washington, who was taking his usual rounds on horseback, heard their talk and said: "Boys, are you also Armenians?" (p. 508).

There are also a great number of amusing tales containing the comparative characteristic peculiarities of Jews, Frenchmen, Russians and particularly Armenians. One of them is "The Jews and the Armenians" and runs as follows. In hell, they dip the Jews and the Armenians in a cauldron full of boiling water. The Jews free themselves by climbing up on the shoulder of another compatriot, whereas, when an Armenian tries to come out of the cauldron, another Armenian pulls him down from the feet, so that they boil together (p. 515).

There are humorous stories connected with Stalin, Churchill, Khrushchev and John Kennedy. In a raillery criticizing Khrushchev, we read: "A man went to the Kremlin and started to shout: 'Khrushchev is an idiot, Khrushchev is an ass'. They send him to prison for 2 years for speaking against Khrushchev and ten years for revealing a state secret" (p. 519).

There are funny tales connected with Clinton, Yeltsin, Levon Ter-Petrossian, Ben Laden, George Bush Sr., George Bush Jr., Erdoghan and Obama.

Along with folklore ditties and lullabies, there are simple, sincere songs about nation-gathering and nostalgia:

"Whoever renounces his nation,
May he lose his both eyes,
Let him beg from door to door,
Like a perfect pauper.
We are Vardan's sons by nature,
There aren't strangers among us,

By assisting our Motherland,
We are comforted day by day" (p. 589).

The section of proverbs and sayings is plentiful and contains timeless sagacious ideas based upon age-long experience. For instance: "Fight with one lion and not with a thousand mice" (p. 594), "You better eat the stale bread of your home, rather than the barbecue of a foreigner" (p. 598), "The Jew uses his brains, the Armenian uses his hands" (p. 600), "He who expects good will from a Turk, will find misfortune from God" (p. 601), "A pessimist will soon be disappointed, an optimist will look for a way out" (p. 602), "The pleasure of giving is greater than that of receiving" (p. 602), etc. Numerous are also the moralizing admonitions: "Behind every successful man there is always a clever woman and behind every unsuccessful man there is always another woman" (p. 604), "Be scared of one, who does not fear God" (p. 606); "Do not be afraid of a job, let the job be afraid of you" (p. 607); "You are Armenian, you will win!" (p. 607); "If you have Armenian blood in you, you have to struggle " (p. 607); "If you lose your language, you will lose your nation" (p. 608); "Respect your parents and love them" (p. 610); "Man will go, his work will remain" (p. 611); "Do not do evil in order not to find evil" (p. 612); "Do not stoop too much, otherwise you will be straddled" (p. 613); "A nation's force is not in its quantity, but in its quality" (p. 615); "A nation's mirror is its history" (p. 615); "Everybody's fate is in his hand" (p. 615); "Cursed be the one, who renounces his nation" (p. 617); "A tree is strong by its root, an Armenian – by his nation" (p. 620); etc.

Verjiné Svazlian's book "The Oral Tradition of the Armenian-Americans in the Course of Time" has a profound instructive sense. It has been developed and created by virtue of her 40 years' productive work, when the author visited the United States of America in 1979, 1990, 2001, 2004, 2008, has been in various cities, has met Armenians of various professions and age and has collected the oral creative materials of the Armenian-Americans in fragments making them a common property and bequeathing them to the future generations.

AELITA DOLOUKHANYAN

Associate member

of the National Academy of Sciences of the Republic of Armenia

aelita.dolukhanyan@gmail.com



ՈՒՇԱԳՐԱՎ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(արժանի հակահարված պատմության կեղծարարներին)

Ա. ՄԱՐՈՒՔՅԱՆ, Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Ա. ԱՍՏՈՅԱՆ, Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

(Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2021, 640 էջ)

Հայ պատմագիտության արդի կարևորագույն խնդիրներից է նախորդ դարասկզբին հայ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանության և գործիքակազմի մշակումը և որոշակի հայեցակարգի ներկայացումը: Այս նպատակով ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի հովանու ներքո 2016–2018 թթ. տարբեր գիտաճյուղերի մասնագետներից ձևավորվեց գիտական խումբ, որի կողմից իրականացվեց «Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կորուստները և հատուցման կառուցակարգերի մեթոդաբանական հիմքերը» թեմայով հետազոտություն:

Հաշվի առնելով սույն թեմայի գիտաքաղաքական կարևոր նշանակությունը, վերոնշյալ ուղղությամբ շարունակվեցին գիտական հետազոտությունները: 2020 թ. ձևավորվեց մասնագիտացված հետազոտական նոր խումբ, որի առջև առավել հստակ խնդիր դրվեց՝ հետազոտել Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը:

Հետազոտական խմբի ղեկավար է նշանակվում պատմագիտության դոկտոր Արմեն Մարուքյանը: Ի տարբերություն նախորդ խմբի, նոր թեմայի կատարման աշխատանքներում մասնագետ է ընդգրկվում նաև Սփյուռքից (Մ. Գասպարյան):

Հետազոտական սույն խմբի կողմից ուսումնասիրվել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված մշակութային կորուստների վերաբերյալ բազմաթիվ արխիվային փաստաթղթերում, ականատեսների վկայություններում և մամուլի հրապարակումներում առկա վիթխարածավալ տեղեկությունները: Մասնավորապես, հետազոտական խմբի ղեկավար Արմեն Մարուքյանի կողմից ուսումնասիրվել են թեմային առնչվող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության արխիվի փաստաթղթերը, ինչպես նաև այլ նյութեր ու հետազոտություններ:

Ի վերջո, հետազոտական խումբը՝ Արմեն Մարուքյանի, Մարտիկ Գասպարյանի, Անահիտ Աստոյանի, Անի Ոսկանյանի հեղինակությամբ գիտական հանրության գրասեղանին դրեց ստվարածավալ մի ժողովածու՝ «Հայոց ցեղասպանության մշակութային և նյութական հետևանքների հաղթահարման մեթոդաբանությունն ու գործիքակազմը» խորագրով: Այն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Գրքի խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր Արմեն Մարուքյանը: Ստվարածավալ ժողովածուն (639 էջ) նախատեսված է գիտական լայն շրջանակների, ինչպես նաև Հայոց ցեղասպանության պատմության ու, մասնավորապես, պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների համար:

Հետազոտական խմբի ղեկավար Ա. Մարուքյանի կողմից ժողովածուում առանձին բաժնով ներկայացվել են նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնահարցի վրա աշխարհաքաղաքական գործընթացների ու Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների ազդեցությանը վերաբերող բաժինները: Վերջինիս կողմից խորքային, ըստ ամենայնի քննական վերլուծություն է կատարվել ցեղասպանության ընթացքում և դրանից հետո հայության ունեզրկման՝ թուրքական իշխանությունների վարած քաղաքականության տեսանելի և ոչ տեսանելի խորշերը բացահայտելու ուղղությամբ: Մասնավորապես, վեր է հանվում, բացահայտվում ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդի ունեզրկման երիտթուրքական կառավարության կիրառած այսպես կոչված, «օրենսդրական» մեխանիզմների սահմանման և դրանց գործադրման բուն ընթացքն ու արդյունքները (սույն հիմնահարցն առաջին անգամ է խորությամբ բացահայտվում մեր պատմագրության

մեջ): Ըստ այդմ հիմնավորվում է, որ «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքով հայության զանգվածային բնաջնջման համար «իրավական» հիմքեր ապահովելուց անմիջապես հետո թուրքական իշխանությունները ընդունեցին (1915 թ. հունիսի 10-ին) «Լքյալ գույքի մասին» երեսունչորս հոդվածներից բաղկացած օրենքը: «Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքի վարչական կարգադրությունների մասին» վերնագրով իրավական սույն փաստաթղթով տարագրյալ հայության ողջ ունեցվածքը համարվում էր լքյալ: Նշվում է ակներև այն հակասության մասին, որ առկա էր այստեղ, քանզի «Տեղահանության մասին» օրենքով հայերը ոչ թե ինքնակամ, այլ հարկադրաբար էին լքել իրենց բնակավայրերն ու ունեցվածքը: Այսինքն՝ նրանք չէին հրաժարվել այդ ամենի նկատմամբ իրենց օրինական իրավունքներից, ուստի այդ գույքի նկատմամբ ցանկացած գործողություն չէր կարող համարվել օրինական՝ անգամ, եթե այն տեղի ունենար պետական մարմինների կողմից: «Լքյալ գույքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի պահանջով տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքը, իբր, պետք է կնքվեր և ի պահ հանձնվեր պետության կողմից ստեղծվելիք վարչական հանձնաժողովներին (այսինքն՝ համարվեր անձեռնմխելի): Սակայն, գործնականում թուրքական իշխանություններն օրենքի տվյալ դրույթն ընկալում էին որպես տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի յուրացման միջոց և փաստացիորեն իրենց էին վերապահում այդ գույքի ոչ միայն շահագործման, այլև տնօրինման իրավունքը:

Նույն օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում էր հայերի շարժական գույքի պահպանմանը, որը պետք է սեփականատերերի անուններով հաշվառվեր, գնահատվեր և ի պահպանություն փոխադրվեր եկեղեցիներ, պահեստներ ու մթերանոցներ: Սակայն իրականում հայերի տներից ունեցվածքի դուրսբերումը թուրքական իշխանություններին հնարավորություն էր տալիս ավելի հեշտությամբ տնօրինել նրանց անշարժ գույքի ճակատագիրը:

Բազմաթիվ կոնկրետ փաստերով և օրինակներով հիմնավորվում ու անհերքելի է դառնում այն տեսակետը, որ ցեղասպանությանը զուգահեռ իրագործվող հայ բնակչության համայնքային սեփականության, հոգևոր-կրթական կառույցների և մասնավոր անշարժ գույքի ու ունեցվածքի զանգվածային ոչնչացման ու նաև թալանի քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն Արևմտահայաստանի նահանգներով, այլ ընդգրկում էր կայսրության ողջ տարածքը: Վերոնշյալ դրույթը հեղինակի (Ա. Մարուքյան) կողմից ման-

րամասնվում է Ադանայի նահանգի Ադանա գավառի օրինակով և թվերով ու փաստերով ցույց է տրվում, որ թուրք զավթիչներին են անցել հայերի թողած վիթխարի չափերի հասնող հարստությունները:

Տեղահանված հայերի ունեցվածքը բռնազավթելու գործում երիտթուրքական իշխանությունները 1915 թ. սեպտեմբերի 13-ին ընդունեցին նոր օրենք, որի նպատակն էր վերահսկողության տակ առնել տեղահանված հայերի լքված անշարժ ու շարժական գույքի և ունեցվածքի յուրացման գործընթացն այնպես, որ ամբողջ հարստությունը փոխանցվի պետական գանձարան:

Այսպես քայլ առ քայլ բացահայտվում են իր պատմական հայրենիքում հազարամյակներ շարունակ ապրած հայ ժողովրդին կողոպտելու և ունեզրկելու գործողությունները, որոնց թուրք բարբարոսները «օրենքի» տեսքով օրինականության շղարշ էին հագցնում:

Այս շարքում վերջին ակորդը հնչեց 1931 թ. մարտի 28-ին ընդունած օրենքով, որի համաձայն «լքյալ գույքը» կարող էր վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին, եթե վերջիններս ներկայացնեին այդ իրավունքը հաստատող փաստաթղթեր: Առաջին հայացքից օրինական թվացող սույն պահանջը, սակայն, իրականում որոշակի ենթատեքստ ուներ:

Թուրքական իշխանությունները հստակ գիտեին, որ ցեղասպանության ժամանակ զոհված հայերի ժառանգների միայն չնչին մասի մոտ կարող էին պահպանված լինել իրենց իրավունքը հաստատող սեփականության վկայականներ: Այս առումով հետևյալն է փաստարկվում. «Բնական է, որ զանգվածային կոտորածների և բռնագաղթի պայմաններում, երբ յուրաքանչյուր հայի կյանքն էր սպառնալիքի տակ, նրանցից քչերն էին մտածում իրենց հետ փաստաթղթեր վերցնելու և պահպանելու մասին: Եթե անգամ նրանք իրենց հետ վերցրել էին ինչ-որ փաստաթղթեր, ապա շատերը դրանք կորցրել էին գաղթի ճանապարհներին: Այսինքն՝ ստացվում էր, որ Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների մի չնչին մասը կարող էր ներկայացնել համապատասխան փաստաթղթեր» (էջ 57):

Հետազոտական խմբի սփյուռքահայ մասնագետ, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Գասպարյանը քննության է ենթարկել մշակութային ցեղասպանության (կուլտուրոցիդի), ինչպես նաև զանգվածային բռնազավթման հետևանքներով հայությանը հասցված մշակութային և նյութական կորուստների ծավալների հստակեցման, ճշգրտման, հաշվառման ու դրանց վերականգնման (հատուցման) հիմնահարցերը:

Հետազոտական խմբի անդամ, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի գիտական աշխատակից Ա. Աստոյանի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են Իզմիթի գավառի հայության տնտեսական վիճակին և Մեծ Եղեռնի հետևանքով նրա ունեցած նյութական ահռելի կորուստներին:

Ըստ վերջինիս դիտարկումների, Իզմիթի գավառի հայության տնտեսական և կրթամշակութային կյանքը XIX դարի կեսերից ունեցել է զարգացման իր առանձնահատուկ ուղին: Այստեղ հիմնված բազմաթիվ կրթական ընկերությունները նպաստել են կրթված ու կյանքին պատրաստ հայ սերընդի կերտմանը, որի առաջավոր ներկայացուցիչները, ծանոթանալով տնտեսության եվրոպական նորագույն մեթոդներին, իրենց նախաձեռնություններով ու ձեռներեցությամբ էապես սատարել են իզմիթահայության տնտեսական արագ բարգավաճմանը: Սակայն այդ ամենը կողոպտվեց կամ հրո ճարակ դարձավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ըստ մեջբերված տվյալների, տեղահանությունից առաջ շուրջ 20 հազարի չափ հայություն կար Ադաբազարում: Շուրջ 3500 հայ ընտանիքներից հազիվ 800 ընտանիք էր կարողացել փրկվել կոտորածներից: Ներկայացվում են այն ջանքերը, որ վերապրող հայերը գործադրեցին պատերազմի ավարտից հետո իրենց քանդված օջախները նորոգելու ուղղությամբ: Սակայն վերոնշյալ ջանքերն ու փորձերը չեզոքացվում էին թուրքական հին և նոր իշխանությունների բացահայտ կամ լռելյայն դիմակայությամբ: Այսպես, ըստ հեղինակի փաստերի, 1919 թ. նոյեմբերին Պարտիզակում կար 2500 հայ, որը լծված էր գյուղաքաղաքի վերաշինության գործին և այն աստիճանաբար կենդանանում էր, որից դժգոհ թուրքերը առիթը բաց չէին թողնում անընդմեջ հարձակվել հայերի վրա և նորանոր ոճիրներ գործել: Երիտթուրքերին փոխարինած քեմալականները գործում էին նույն ոգով և ոճով, մինչև որ Իզմիթի գավառն ամբողջապես հայաթափվեց:

Հետազոտական խմբի անդամ, գիտաշխատող Անի Ոսկանյանը ներկայացրել է «Այնթապի հայերի տնտեսական և կրթական վիճակը. 1915 թ. բնաջնջումը և ունեզրկումը» բաժինը, որում ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում Այնթապի ժողովրդագրական զարգացումների, տեղի հայերի տնտեսական վիճակի, Այնթապի արհեստների ու հայ արհեստավորների, նշանավոր ընկերությունների, ընտանիքների ու անհատ վաճառականների վերաբերյալ: Թվերով ու փաստերով, դեմքերով ներկայացված են Այնթապի

հայության կրթական հաստատությունները, դպրոցական ընկերությունները, մամուլի գործունեությունը:

Եվ այս ամենից հետո՝ 1915 թվականի ամենակուլ խորշակը, որը սրբեցտարավ ամեն ինչ:

Ամփոփելով, արձանագրենք, որ սույն ժողովածուն բացառիկ կարևոր նշանակության գործ է, որը կոնկրետ ու բազմառատ փաստական նյութով արժանի հակահարված է տալիս պատմության՝ երեկվա և այսօրվա թուրք կեղծարարներին և նրանց ձայնակցողներին ու աջակիցներին:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
armenaraksyan@mail.ru

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ
JUBILEE



ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ

ՊԱՏՄԱԲԱՆ, ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏ, ՀԱՅԱԳԵՏ ԵՎ ՊԱՐԶԱՊԵՍ ՀԻԱՍՔԱՆՉ ՄԱՐԴ
(ԾՆՆԴՅԱՆ 95-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

«Գործք առանց նշանաց յերկինս փանի, բայց նշանք առանց գործոց, ոչ կարեն ի նախադրունս արքայութեանն ումեք առաջնորդել. նշանք ոչ ապրեցուցանեն ի պատժոյ, իսկ գործք ոչ կարաւփին փրկողաց»[1]:

Հուլիսի 7–ին ակադեմիկոս, պատմաբան, բյուզանդագետ, հայագետ Հրաչ Բարթիկյանը կդառնար 95 տարեկան[2]: Արդեն տասնմեկ տարի է, որ նրա բացակայությունն զգացվում է Հայաստանի (և ոչ միայն Հայաստանի) ակադեմիական կյանքում: Հիրավի, վիթխարի է նրա ներդրումն ինչպես հայագիտության, այնպես էլ համաշխարհային բյուզանդագիտության մեջ:

---

[1] ՄՄ թիվ 1879 ձեռ., 358բ–359ա: Այս տողերը վերցված են «Գիրք պատճառաց»-ից՝ «Յոհաննու Ոսկեբերանի տեսութիւն վասն *Գործոցն Առաքելոցն*» նախակրթությունից, որում հեղինակը, խոսելով *Գործք Առաքելոց* նորկտակարանյան գրքի մասին, բացատրում է, թե ինչո՞ւ այն չի կոչվել *Նշանք Առաքելոց* կամ *Հրաշք Առաքելոց:* Հենց այս հոդվածի համար ընտրված սույն բնաբանը, ինչպես մեզ է թվում, բնութագրում է ոչ միայն Քրիստոսի, այլև «գիտության առաքյալների» (եթե կարելի է այս եզրով սահմանել գիտության նվիրյալ մշակներին) գործունեության բուն իմաստը:

[2] Փաստորեն սա Հրաչ Բարթիկյանի երկրորդ հոբելյանն է, որը նշվում է նրա բացակայությամբ: Հր. Բարթիկյանի 90-ամյակը հենց նրա ծննդյան օրը տոնվեց ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, տնօրեն Աշոտ Մելքոնյանի ջանքերով, որը թեև մշտապես առանց խտրականության է վերաբերել իր տնօրինած ինստիտուտի աշխատողներին, սակայն ընդգծված հատուկ վերաբերմունք է ունեցել (և կարևորն ունի) ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանի նկատմամբ:

Հրաչ Բարթիկյանի կենսագրականի, ուսումնառության և գիտական ճանապարհի մասին բազմիցս է գրվել: Կան նաև աշխատանքների մատենագիտական ցանկեր[3]: Այսօր այդ տեղեկությունները հասանելի են բոլորին՝ շնորհիվ համացանց կոչված վիրտուալ եղելությանը: Հրաչ Բարթիկյանի մասին, սակայն, գրվել է և՛ շատ, և՛ քիչ. շատ՝ որովհետև ամեն օր զգացվում է նրա բացակայությունը և ոչ միայն հարազատների ու ընկերների համար, այլև մասնագետների, որոնք լայնորեն օգտվում են գիտնականի աշխատություններից՝ մեջբերելով նրա փայլուն մտքերը, և քիչ՝ քանզի դեռևս շատ գրվելիք ու հետազոտվելիք հարցեր կան, որոնց լուսաբանման համար Հրաչ Բարթիկյանի գործերը երբեմն պարզապես անփոխարինելի են: Այսու, փոքր ակնարկով կներկայացվեն ոչ թե նրա աշխատանքները, ստացած պատվո նշանները և կոչումները, այլ այն բացը և վերարժևորումը, որն այսօր էլ սուր կերպով զգում են շատ և շատ գիտնականներ: Մեկնաբանելով, սակայն, «վերարժևորում» բառը, պետք է դիմենք Գրիգոր Տաթևացուն՝ նշելով, որ «օրհնելն՝ մեծին

---

[3] Հարկ է նշել, որ այդ ցանկերում բացակայում են Հրաչ Բարթիկյանին նվիրված երկու հոդված. Է. Մ. Շիրինյան, «Պատիվ և հարգանք (*Τιμή τε κα` χάρις*)», Տարեգիրք Բ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան, 2007, էջ 46-57 (այսուհետ՝ Շիրինյան, Պատիվ և հարգանք): Манеа-Эрна Ширинян, De Viris Illustribus: сравнительное жизнеописание двух славных мужей – Грача Михайловича Бартикяна и Гюнтера Христиана Хансена Памяти Гр.М. Бартикяна и Гюнтера Христиана Хансена, Византийский Временник, 100 (2016), pp. 361-365 (այսուհետ՝ Ширинян, De Viris Illustribus): Դրանցից առաջինը նվիրված էր անվանի բյուզանդագետի 80-ամյակին և լույս էր ընծայվել իր կենդանության օրոք: «Պատիվ և հարգանք» վերնագիրը յուրօրինակ բանաձևի վերտառություն է, որը կոչված էր «մարդու արժանիքները նշելու և նրա գործունեությունը բարձր գնահատելու համար».... «Փառքը, երբ անձն ինքն իրեն զգում է փառավորված, իսկ պատիվը, երբ ուրիշներից, արտաքուստ էլ է ստանում փառքի արտահայտությունները» - ասում է Գրիգոր Տաթևացին Սաղմոսների մեկնությունում: Գրիգոր Տաթեւացի, Մեկնութիւն Սաղմոսաց, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան 1993, էջ 13» (տե՛ս Շիրինյան, Պատիվ և հարգանք, էջ 46): Եվ որովհետև «Տարեգիրք» կոչվող ամսագիրը բավական անտեսված է ընթերցողի կողմից ու շատ քչերն են դրան ծանոթ (ինչպես ասաց ինքը՝ Հրաչ Բարթիկյանը. «Եթե չնվիրեիր այս համարը երբեք պիտի չիմանայի այս հոդվածի մասին»), ինչպես նաև որովհետև այդ հոդվածը նրա առանձնահատուկ հավանությանն էր արժանացել՝ այստեղ թույլ կտանք փոքր-ինչ լայնածավալ մեջբերումներ անել դրանից: Հետմահու լույս տեսած երկրորդ հոդվածը տպագրվել է հեղինակավոր Византийский Временник-ի հոբելյանական համարում և կազմված է հին ժամանակներին բնորոշ (օրինակ՝ Պլուտարքոս, Սվետոնիոս) նշանավոր հույն և հռոմեացի առաքինի այրերին նվիրվող «Զուգահեռ վարքեր»-ի՝ համեմատական կենսագրությունների ժանրի ներքո. այդտեղ երկրորդ «առաքինի այրը» գերմանական հայտնի «Բիբլիոթեկա Թեուբներիանայի» (Bibliotheca Teubneriana) գլխավոր խմբագիր Գյունթեր Քրիստիան Հանսենն է:

է զնուազն ըստ Պօղոսի. «Ամենայն իրօք նուազն ի լաւ է անտի օրհնեսցի» (Եբր. Է 7), իսկ գովելն՝ նուազին է զմեծն, իսկ բարեբանելն՝ հաւասարիցն»[4]:

Հրաչ Բարթիկյան գիտնականի թերևս ամենացայտուն և կարևոր առանձնահատկություններից էր նրա՝ բյուզանդագետ լինելը: Հայտնի է, որ բյուզանդագիտական հետազոտություններն առաջնակարգ նշանակություն ունեն ոչ միայն հայ միջնադարագիտության մեջ: Միևնույն ժամանակ, բյուզանդագիտական ուսումնասիրությունների համար ոչ պակաս կարևոր են նաև հայկական աղբյուրներն ու հայագիտական հետազոտությունները: Զարմանալիորեն, սակայն, հայ հումանիտար գիտության մեջ բյուզանդագետները շատ քիչ էին թե՛ նախկինում և թե՛ այսօր: Հետաքրքրական է, որ հայոց գիտությունը 1927 թ. հարստացավ ոչ միայն մեկ ապագա բյուզանդագետով, այլև նույն տարում, այն էլ շատ խորհրդանշական մի օր՝ հունվարի 6-ին, Թիֆլիսում ծնվեց մեր բյուզանդագիտության մեկ այլ սյուներից մեկը՝ Կարեն Յուզբաշյանը: Նրանց գիտական կենսագրականներում շատ ընդհանրություններ կան, սակայն գլխավորն այն է, որ երկուսն էլ եղել են Լենինգրադյան «դպրոցի» սաներ, որոնց վրա մեծ ազդեցություն է ունեցել Հովսեփ Օրբելին, որը եղել է նաև Հրաչ Բարթիկյանի թեկնածուական ատենախոսության ղեկավարը: Այս երկու գիտնականներն էլ ստացել են մասնագիտական կրթություն, այլ ոչ թե առնչվել են բյուզանդագիտությանը հայագիտական հարցերի շրջանակում, ինչն ավելի հաճախակի երևույթ է մեզանում[5]: Սա հասկանալի է, քանի որ հայագիտության և բյուզանդագիտության փոխադարձ առնչությունները վերաբերում են տարբեր բնագավառների՝ պատմությանը, աղբյուրագիտությանը, աստվածաբանությանը, գրականությանը, փիլիսոփայությանը, ճարտարապետությանը, երաժշտությանը, բժշկության պատմությանը, աշխարհագրությանը, մանրանկարչությանը և, ընդհանրապես, արվեստի ու մշակույթի ոլորտներին: Այսուհանդերձ, մեզանում հիմնական ուշադրությունը սևեռված է հայագիտական նյութի վրա և շատ հազվադեպ է, որ բյուզանդագիտական նյութը ներկայացված է հայկականին հավասարաչափ, ինչի մասին երազում էր և բազմիցս խոսում հենց Հրաչ Բարթիկյանն իր ելույթներում:

---

[4] Գրիգոր Տաթեւացի, նշվ. աշխ., էջ 12, հմմտ. Շիրինյան,Պատիվ և հարգանք, էջ 57:

[5] Այսօր Հայաստանում գրեթե չկան բյուզանդագիտական կրթություն ստացած մասնագետներ. 1980-ական թվականներին այդ մասնագիտացումը ստացած երեք հոգուց (Ելենա Ջաղացպանյանը, Իրինա Ուսաչովան, Է.Մ. Շիրինյանը) երկուսը (առաջին երկուսը)՝ Հայաստանում չեն և կարծես թե չեն զբաղվում բյուզանդագիտությամբ:

Այս հանգամանքը, բացի մասնագետների պակասից, իհարկե ունի այլ բացատրություններ ևս, այն է՝ դարեր շարունակ Հայոց պատմության համար Բյուզանդիայի խաղացած բացասական դերի պատճառով բյուզանդագիտության նկատմամբ մեզանում եղած վերաբերմունքը միանշանակ չէ: Եղել են և, զարմանալիորեն, դեռևս կան մասնագետներ, որոնք հենց նշված դերի պատճառով ժխտական վերաբերմունք ունեն խնդրո առարկա գիտության վերաբերյալ: Մի՞թե մանկամտություն չէ չուսումնասիրել արդեն իսկ գոյություն չունեցող, բայց ժամանակին մեր պատմության հետ այդքան սերտաճած կայսրության վերաբերող հարցերը: Չէ՞ որ, եթե դու այդ ոլորտից բացակայում ես, այն լրացնում են պատմությունը խեղաթյուրողները և միտումնավոր միայն վատ անցքերը տեսնողները: Ավելին, հաճախ անգամ լուրջ բյուզանդագետներ կարող են շատ քննական և անգամ քննադատական ոգով մոտենալ հարցին: Օրինակ, հեղինակավոր բյուզանդագետ Ժոզեֆ Լորանը, անդրադառնալով հայ-բյուզանդական հարաբերություններին, առանց վարանելու խոսում է Բյուզանդիոնի դեմ հայկական «դաւաճանության մասին»: Լևոն Զեքիյանն իր հոդվածներից մեկում շատ տեղին ու արդարացի հարցադրումով էր պատասխանել այդ գիտնականին՝ «թէ ո՛վ որո՞ւն դաւաճանած է»: Իհարկե պետք է աչալուրջ լինել և միշտ ստուգել ասվածն ու ասողին, միշտ անկողմնակալ, քննադատական եւ սառը մոտեցումով ընկալել կամ արտահայտել խնդիրը, առանց դոգմատիկ և ազգայնամոլական դիրքորոշումների:

Հարցն էլ ավելի է բարդանում այն հանգամանքով, որ թե՛ խորհրդային շրջանում և թե՛ այսօր բյուզանդագիտության մեջ որոշակի քաղաքական միտում է նկատվում՝ անտեսելու հայկական հարուստ նյութը: Խորհրդային տարիներին, որպես կանոն, առավելությունը և նախապատվությունը միշտ տրվում էր Ռուսաստանի հետ առնչվող նյութին: Ծագումով ոչ հայ բյուզանդագետները շատ քիչ էին անդրադառնում հայկական աղբյուրներին: Զարմանալի չէ, որ հայտնի բյուզանդագետ Ա. Կաժդանը հայերին նվիրված իր մենագրությունը հրատարակեց Երևանում:

Այսպիսի վերաբերմունքը որոշ չափով նկատելի է նաև եվրոպական և ամերիկյան բյուզանդագետների շրջանում, որի պատճառով էլ հայկական նյութը հաճախ դուրս է մնում միջազգային գիտական համատեքստից: Այս պարագայում, մասնավորապես վերջերս, առաջնակարգ, և կարելի է ասել, անգամ գլխավորող դեր է ընձեռվում Թուրքիայի մասնագետներին, ինչը նախկինում հույն բյուզանդագետների մենաշնորհն էր: Ոլորտի քաղաքականացված լինելը պարզ երևում է նաև Բյուզանդագիտական միջազգային կոնգ-

րեսների կազմակերպման ժամանակ, որոնք տեղի են ունենում 5 տարին մեկ անգամ (օրինակ՝ 2006 թ. օգոստոսի 21–26-ը Լոնդոնում կայացած 21-րդ կոնգրեսը մասնակցության համար սահմանել էր դրամաշնորհներ միայն Թուրքիայի և Վրաստանի գիտնականների համար): Դրությունը նույնն է նաև մեր օրերում. սույն թվականի օգոստոսին Վենետիկում կայանալիք Բյուզանդագիտական 24-րդ կոնգրեսի չորս պլենար խոսնակներից երեքը Թուրքիայից են[6]:

Հետխորհրդային շրջանում հայ բյուզանդագետները կամ բյուզանդագիտության վերաբերյալ ուսումնասիրություն կատարող հայագետները հաճախ չեն մասնակցել այդ կոնգրեսներին, ինչը, կարծում ենք, մեծ վնաս է բերել ոչ միայն մեր գիտությանը, այլև արտաքին քաղաքականությանը: Իրադրության այսպիսի զարգացումը պայմանավորված չէր միայն ֆինանսական հանգամանքներով, դրա պատճառներից էին ճիշտ ժամանակին չկողմնորոշվելն ու բյուզանդագիտական ընդհանուր կառույցին չանդամակցելը:

Ահա այս իրադրությունը դրդեց հայաստանյան բյուզանդագետներին՝ միավորելու իրենց գիտական ներուժը և 2003 թ. պ.գ.դ. Մ. Է. Շիրինյանի նախաձեռնությամբ հիմնել Հայկական ազգային բյուզանդագիտական կոմիտեն, որի առաջին նախագահը եղել է ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը (փոխնախագահ՝ պ.գ.դ. Մ. Է. Շիրինյան, գիտ. քարտուղար՝ ար.գ.դ. Ա. Արևշատյան): 2006 թ. Լոնդոնում կայացավ 21-րդ կոնգրեսը, որտեղ Հայաստանի Կոմիտեն առաջին անգամ մասնակցեց որպես Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող կառույց՝ իր հետ տանելով Հայկական ազգային բյուզանդագիտական կոմիտեի նախագահ Հրաչ Բարթիկյանի ուղերձը: Այսու՝ Կոմիտեին հնարավորություն ընձեռվեց դառնալ Բյուզանդագիտական միջազգային ընկերության լիարժեք անդամ ու մաս կազմել բյուզանդագետների միջազգային ընտանիքի:

Ասվածից կարելի է պատկերացնել, թե որքան դժվար է եղել Բարթիկյանբյուզանդագետին՝ երբեք չդավաճանել իր հավատամքին և գիտական խղճին այն պարագայում, երբ նրա ուսումնասիրությունների ծանրակշիռ մասը վերաբերում է հայ-բյուզանդական հարաբերությունների պատմությանը:

Նրա հետազոտություններին բնորոշ է բյուզանդական աղբյուրների լայնածավալ ներգրավումը: Հենց նրա շնորհիվ է, որ հին հունարենից հայերեն թարգմանվեցին և «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մա-

---

6 Բյուզանդագիտական 24-րդ կոնգրեսի պաշտոնական կայքն է՝ https://byzcongress 2022.org/news/:

տենաշարի «Բյուզանդական աղբյուրներ» շարքով հրատարակվեցին Պրոկոպիոս Կեսարացու (1967), Կոստանդին Ծիրանածնի (1970), Հովհաննես Սկիլիցեսի (1979), Թեոփանես Խոստովանողի (1983), Թեոփանեսի Շարունակողի (1990) և Միքայել Ատտալիատեսի (2015) աշխատությունները: Նրա թարգմանությունների մեջ հույժ կարևոր նշանակություն ունի նաև Կեսարիայի մետրոպոլիտ Պարթենիոս Աթենացու՝ Երուսաղեմի Սուրբ վայրերի պատկանելության շուրջ հայ և հունադավան եկեղեցիների տարաձայնություններին վերաբերող «Պատմություն հայոց և հունաց տարաձայնության» (2008 թ.) երկը:

Այս հրատարակությունների միջոցով հայագիտությանն առավել հասու դարձան բյուզանդական բազմաթիվ արժեքավոր աղբյուրներ, որոնք առավել հարստացրեցին հայ միջնադարագիտության սկզբնաղբյուրային հենքը: Դրանց շարքում չափազանց կարևոր են Ագաթանգեղոսի երկի հին հունարեն խմբագրությունը, «Narratio de rebus Armeniae» հայ-քաղկեդոնական գործը և հայ-բյուզանդական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ հույժ արժեքավոր վավերագրեր:

Միևնույն ժամանակ հույն ընթերցողը, շնորհիվ Բարթիկյանի հունարեն աշխատությունների՝ «Բյուզանդիան հայկական աղբյուրներում», «Բյուզանդիա և Հայաստան», «Գավրասների բյուզանդական ազնվականության ընտանիքը», հնարավորություն ստացավ ավելի լավ ծանոթանալու հայոց պատմությանը, հայերի և հույների միջև դարավոր փոխհարաբերություններին:

Ճիշտ է, ականավոր բյուզանդագետի ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում էին միջնադարին, սակայն հունարենի իր փայլուն իմացությունը նա ծառայեցնում էր նաև հայոց նորագույն ժամանակների պատմության ուսումնասիրությանը: Այդ շարքից է Հայաստանի Առաջին հանրապետության տարիների հայ-հունական հարաբերություններին առնչվող հունարեն արխիվային վավերագրերի հայերեն թարգմանությունը, ինչպես նաև հետմահու լույս տեսած Իոաննիս Կ. Խասիոտիսի «Պատմական ավանդույթ և քաղաքական իրապաշտություն. հունական քաղաքականությունը Հայկական հարցի վերաբերյալ (1876–1996)» (հունարեն բնագրից թարգմանությունը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչ Մ. Բարթիկյանի) աշխատությունը, որում ներկայացվում է Հայկական հարցի վերաբերյալ 1876–1996 թթ. հունական քաղաքականությունը: Նրա մեծարժեք թարգմանությունները, որոնք, հիրավի, անգնահատելի ներդրում են հայագիտության մեջ, սոսկ թարգմանություններ չեն,

այլև գիտական հարուստ ծանոթագրություններ պարունակող հետազոտություններ:

Հրաչ Բարթիկյանի առաջին աշխատություններն առնչվել են պավլիկյան աղանդավորական շարժմանը: Նա առանձին ուսումնասիրության նյութ դարձրեց շարժմանը վերաբերող թե՛ հայկական և թե՛ բյուզանդական աղբյուրները՝ նրանց վերաբերյալ քննությունը կատարելով իր թեկնածուական ատենախոսությունում: Նրա իսկ աշխատանքների շնորհիվ հիմնավորապես պարզաբանվեցին պավլիկյան շարժմանը, հատկապես՝ դրա սկզբնավորման ժամանակին, անվան ծագմանը, համայնքին վերաբերող հարցերը: Պավլիկյաններին առնչվող բյուզանդական աղբյուրներից Հրաչ Բարթիկյանի կատարած հայերեն հատվածական թարգմանությունները մեծապես ընդլայնեցին այդ շարժման պատմության աղբյուրները՝ նոր հնարավորություններ ստեղծելով հետագա ուսումնասիրությունների համար:

Հայ միջնադարագիտության համար հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականության, դրա բացասական և դրական ազդեցության, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության, ինչպես նաև հայ-բյուզանդական եկեղեցական առնչությունների վերաբերյալ Հրաչ Բարթիկյանի հոդվածները: Դրանցից շատերն օժտված են նշյալ թեմաներին վերաբերող բյուզանդական վավերագրերի (նամակներ, թղթեր և այլն) հայերեն թարգմանություններով, որոնք բացառիկ կարևորություն են հաղորդում այդ ուսումնասիրություններին: Նրա հետազոտություններին, առանց բացառության, բնորոշ են գիտականության և տեսակետների հիմնավորվածության բարձր աստիճանը, և, որ ամենակարևորն է՝ գիտական նորույթի առկայությունը:

Ամփոփելով Հրաչ Բարթիկյանի մասին մեր խոսքը՝ ևս մեկ անգամ նշենք, որ նրա գրեթե բոլոր աշխատություններում ցայտունորեն համադրված են խորագետ պատմաբանի և բանասերի գիտելիքն ու հմտությունը, այլ խոսքով՝ նա առաջնորդվել է հետևյալ համոզմամբ. «Այն պատմաբանը, որն անտեսում է բանասիրությունը, սավառնում է օդում, իսկ պատմությանն անտեղյակ բանասերը՝ գետնին է կպած»[7]:

Հարկ է նաև նշել, որ բյուզանդագիտության բնագավառում Հրաչ Բարթիկյանի արձանագրած ձեռքբերումներին մեծապես նպաստել է նրա հունարենի հոյակապ իմացությունը. նա տիրապետում էր հին հունարենին, իսկ նո-

[7] Шириняն, De Viris Illustribus, էջ 361.

րը՝ նրա մայրենի լեզուն էր (քանի որ, նա ծնվել և ապրել է Հունաստանում գրեթե քսան տարի):

Իբրև գիտության անխոնջ մշակ՝ նա մինչև իր կյանքի վերջին օրերը նվիրվեց գիտությանը՝ ավարտին հասցնելով «Հայերը Բյուզանդիայում» կոթողային աշխատությունը, որը հրատարակության պատրաստման փուլում է:

Գլուխը համեստորեն թեքած՝ նա ամեն օր անցնում էր հարյուրավոր մարդկանց կողքով, ովքեր նույնիսկ չէին էլ ենթադրում, թե ինչ մեծ գիտնական անցավ իրենց կողքով: Երբ Հունաստանում լույս տեսած նրա մի գրքի վերաբերյալ գրված գրախոսականում Հրաչ Բարթիկյանին անվանել էին κορυφαῖος[8], ինչը, հասկանալի պատճառներով, չափազանց շոյել էր նրա ինքնասիրությունը, նա դրա մասին ասաց շշուկով, կարծես թե ամաչելով, որ իր հետ նման բան է պատահել: Միևնույն ժամանակ Հրաչ Բարթիկյանը շատ սկզբունքային էր և եթե հարցը վերաբերեր լուրջ գիտական զանցանքի, ապա նա կարող էր անճանաչելի դառնալ:

Հրաչ Բարթիկյանը մահացավ շատ խաղաղ (ինչը ևս երանություն է և թերևս տրված է առաքինի մարդկանց). նա պարզապես մի օր չարթնացավ և, ինչպես պատմում էին նրա դստրերը, խաղաղ պառկած էր անկողնում՝ փոքրինչ գլուխը թեքած, ինչն այնքան բնորոշ էր այդ զարմանալի մարդուն և հզոր գիտնականին:

ԷՌՆԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

erna.shirine@gmail.com

ՎԱՀԵ ԹՈՐՈՍՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

vahetorosyan3@gmail.com

[8] Հունարեն այս բառով, որը ծագում է κορυφή-ից (գլխի վերևի մասը), ընդունված է սահմանել գիտության և արվեստի ականավոր գործիչներին՝ տաղանդավոր մարդկանց, որոնք առաջատար դեր են խաղում իրենց ոլորտում: Այս բնութագրումը հույները հազվադեպ են օգտագործում, հատկապես օտարազգի գիտնականին բնորոշելու համար, այնպես որ տվյալ պարագայում իհարկե դա շատ հուզիչ և գնահատելի է:

ՄԵԾ ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉՈՎ



«Ես մինչեւ այսօր ալ երջանիկ եմ իմ որոշմամբ,
ես եկած եմ իմ մեծ կարօտի կանչով»
Սեդա Տաճատի Օհանեան

2022 թ.-ի Յունիսին կը լրանայ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինի գիտաշխատող Սեդա Տաճատի Օհանեանի ծննդեան ութսուն ամեակը:

Օհանեան ծնած է Պասրա՝ 5.06.1942 թ.-ին: Վասպուրականցի գրատենչ եւ հայրենանուէր ընտանիքի մէջ հասակ առած Սեդան՝ նախնական ուսումը կը ստանայ Պասրայի Հայ Ազգային Վարժարանէն, երկրորդականը՝ տեղական, իսկ բարձրագոյնը՝ գիշերօթիկ ուսումնական հաստատութենէն: Կեանքի պայմաններու բերումով, հարկադրուած կ՚աշխատի Նաւային Ապահովագրական ընկերութեան մէջ: Ուսման եւ աշխատանքին կողքին Օհանեան գործօն մասնակցութիւն կը բերէ համայնքային հասարակական կեանքէն ներս, ինչպէս՝ Պասրայի Հայ Կարօտեալց Խնամակալութեան, Պասրայի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան (ՀԵԵՄ) աշխատանքներուն:

Որոշ ժամանակ անց, Օհանեան Պասրայէն կը տեղափոխուի Պաղտատ. կ՚անդամակցի Պաղտատի ՀԵԵՄ-ի գիտական եւ մշակութային յանձնախումբին եւ անոր հրատարակած «Լրատու» պարբերաթերթի խմբագրակազմին, իսկ 2000–2004՝ առաջնորդարանի «Կանթեղ»-ին:

Իր ամուսնոյն եւ մօր մահէն ետք, այլեւս ոչինչ զինք կը քաջալերէր կեանքը շարունակել իր ծննդավայրին մէջ: Ուստի, Սեդա Օհանեան հայեացքը վերջնականապէս կ՚ուղղէ իր եւ ամուսնոյն երազանքներու Հայրենիք՝ Հայաստան, որ ամէն սփիւռքահայու երազանքն է նաեւ:

2004-ին կը հաստատուի Հայաստանի Հանրապետութիւն (Երեւան): Ան կը շարունակէ իր ուսումը՝ հայոց պատմութեան մասնագիտութեամբ, եւ 2011-ին կը ստանայ մագիստրոսական վկայականը, իսկ 2015-ին պաշտպանելով թեկնածուական ատենախօսութիւնը, կ՚արժանանայ պատմական գի-

տութիւններու թեկնածուի կոչումին: Մինչ օրս Սեդան կը շարունակէ իր գիտահետազօտական աշխատանքը՝ նոյն հիմնարկի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինէն ներս:

Սեդա Օհանեանի ուսումնասիրութեան գլխաւոր առանցքը Իրաքի հայ համայնքի տարբեր ժամանակներու կրթամշակութային, քաղաքատնտեսական եւ թեմական պատմութեան ուսումնասիրութիւնն է, բայց լեզուներու իմացութիւնը հնարաւորութիւն ընձեռած է աւելին ընձայելու գիտական հանրութեան:

Սեդան հեղինակ է մէկ տասնեակէ աւելի գիտական յօդուածներու. մասնակցած է միջազգային գիտաժողովներու: Իր համայնքի վերաբերող մենագրութիւնները կը կրեն «*Իրաքի հայ համայնքը 20-րդ դարում* (2016)» եւ «Միջագետք *(Իրաք)ի գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար* (2020)» խորագիրները, որոնցմէ առաջինը Իրաքի հայոց թեմի նիւթաբարոյական աջակցութեամբ թարգմանուած եւ լոյս տեսած է արաբերէն լեզուով: Աշխատութիւնները (մենագրութիւններ եւ յօդուածներ) նուիրուած են Միջագետք(Իրաքի) տարածքին հնագոյն ժամանակներէն հայերու եւ հայկական բնակավայրերու գոյութեան եւ յատկապէս միջին դարերէն մինչեւ քսաներորդ դար ինկած ժամանակահատուածին ձեւաւորուած՝ Իրաքի հայ գաղթօճախի պատմութեան: Սեդան բարեխղճօրէն ուսումնասիրած է յետեղեռնեան շրջանի հայերու տեղաբաշխումը Իրաքի տարածքին, Իրաք հասնող եւ Իրաքէն այլ շրջաններ տեղափոխուող հայ եւ ասորի ժողովուրդներու տեղաշարժերը, կատարուած որբահաւաքի աշխատանքները, հայապահպանութեան նպաստող ազդակներու կառուցողական աշխատանքները՝ դպրոց եւ եկեղեցի: Յօդուածներու եւ մենագրութիւններուն մէջ մանրամասն ներկայացուած են Միջագետքի հայկական բնակավայրերու սկզբնաւորումը եւ ձեւաւորման նախադրեալները, միջին դարերէն մինչեւ XX դար, ապա հայ գաղթավայրի կազմաւորումը, իրաքահայ թեմերու (առաքելական, կաթողիկէ) սկզբնաւորումը, տնտեսական ու հասարակական կեանքը եւ այլն: Արժեւորած է Հայ Առաքելական եւ Հայ Կաթոլիկ եկեղեցիներու դերը համայնքային կեանքէն ներս:

Ուսումնասիրութեան մէջ անդրադարձ կայ նաե՛ւ, 1921–1924 թթ.եւ 1947 թուականներու զանգուածային եւ անհատական նախաձեռնութեամբ դէպի Հայրենիք ներգաղթողներու մասին:

Սեդա Օհանեանը, այսօր եւս, բծախնդրօրէն կը շարունակէ իր գիտահետազօտական աշխատանքը:

Ան հարցազրոյցներէն մէկուն այսպէս արտայայտուած է. *«Հայաստանի գիտութիւններու ակադեմիան այսօր իմ երկրորդ տունն է. երախտապարտ եմ Պատմութեան ինստիտուտի տնօրէն, փրոֆէսոր Աշոտ Մելքոնեանին, իմ գիտական ղեկավար, ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեանին, Կարէն Խաչատրեանին եւ ... իմ կեանքիս, իմ ճակատագրիս ամենամեծ ու առաջին ուսուցիչներուս՝ ծնողներուս, որոնց դաստիարակութեան շնորհիւ այսօր ես այն եմ, ինչ կամ»:*

Շնորհաւոր ծնունդդ Սիրելի Սեդա:
Թող Աստուած առողջ օրեր պարգեւէ քեզի:

ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ
պատմական գիտությունների թեկնածու
fishenkjianani@hotmail.com

Հրատ. պատվեր N 1180
Ստորագրված է տպագրության 22.08.2022 թ.:
Չափսը՝ 70x100[1]/[16]: 16.75 տպ. մամուլ:
Տպաքանակը 150 օրինակ:

Խմբագրության հասցեն. 375019, Երևան-19,
Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4, հեռ. (+374 10) 521362, 010.564180

Адрес редакции: 375019, Ереван-19,
пр. Маршала Баграмяна 24/4, тел.: (+374 10) 521362, 010.564180

24/4, Marshal Baghramyan
Ave., Yerevan, 375019. Tel: (+374 10) 521362, 010.564180

www.hayagithimnadram.am
Email: banberhayagitutyan@gmail.com, info@haygithimnadram.am

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն փպարան, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24.
Printing House of the "Gitutuyn" Publishing of the NAS RA, 375019,
Yerevan, Marshal Baghramian ave., 24.
Типография издательства «Гитутюн» НАН РА, 375019,
Ереван, пр. Маршала Баграмяна, 24.